




ՅՈՅՄ՝

դժուար ժամանակներու համար
ճոյս Մայրը



ՅՈՅՍ՝

դժուար ժամանակներու համար

Եօյս Մայրը

Hope for Difficult Times, Joyce Meyer, Western Armenian

© 2024 Joyce Meyer Ministries

All rights reserved. This book or any portion thereof may not be reproduced or used in any amount whatsoever without the express written permission of the publisher except for the use of brief quotations in a book review.

Joyce Meyer Ministries P.O. Box 655

Fenton, Missouri 63026 joycemeyer.org

**Յոյս՝ Դժուար Ժամանակներու Համար, Ճոյս Մայրը,
Արեւմտահայերէն**

© 2024 Joyce Meyer Ministries

Բոլոր իրաւունքները վերապահուած են: Այս գիրքը կամ անկէ որեւէ մէկ բաժին կարելի չէ վերարտադրել կամ գործածել որեւէ չափով առանց հրատարակիչէն գրաւոր արտօնութեան մը՝ բացի եթէ անկէ նախադասութիւններ կամ կարճ հատուածներ պիտի գործածուին իբրեւ մէջբերումներ գիրքի ակնարկի մը մէջ:

Joyce Meyer Ministries P.O. Box 655

Fenton, Missouri 63026 joycemeyer.org

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ծանոթություն.....	5
1. Յոյսով Լեցուն	9
2. Ինչ Ընել Երբ Ձեռ Կրնար Դուրս Գալ Կացութենէ մը	17
3. Յուսալից Կեցուածք Ընտրել	25
4. Աստուծոյ Վստահիլ Փոթորիկէն Անցնելու Ատեն.....	31
5. Ամէն Բան Նոր	39
6. Ինչպէս Վեր Նայիլ Երբ Ձգացումներդ Վար Են.....	47
Եզրակացություն.	
Դժուար Ժամանակէ Կ'անցնիս Ներկայիս.....	55

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Ուրախ եմ, որ ընտրած ես կարդալ այս գիրքը:
Կրնայ ըլլալ, որ այս պահուն տեսակ մը տառապանքի մէջ ես կամ կեանքիդ մէջ պատահածները դժուարութիւններ կրելու կարողութենէդ վեր կը թուին քեզի: Եւ մինչ չեմ գիտեր քու պարագայիդ մանրամասնութիւնները, մէկ բան հաստատ գիտեմ.

Դուն առանձին չես. Աստուած կը սիրէ քեզ, մենք ալ կը սիրենք քեզ:

Իրականութեան մէջ ես այս գիրքը գրեցի՝ քաջալերելու համար քեզ եւ սիրտդ յոյսով լեցնելու համար: Կ'ուզեմ, որ գիտնաս, թէ նոյնիսկ այս պահուն՝ մինչ տագնապիդ կամ հարցիդ մէջն ես, Աստուած քու կողքիդ է եւ ոչինչ անկարելի է Իրեն համար (տես Ղուկասի 1.37):

Ան բարի ծրագիր մը ունի ապագայիդ համար եւ Ան արդէն իսկ կը գործէ քույիսներու ետին՝ քեզի օգնելու համար (տես Երեմիայի 29.11):

Կրնայ ըլլալ, որ ապրած ես անկանխատեսելի ողբերգութիւն մը եւ վստահ չես ինչպէս յաղթահարել կացութիւնը եւ յառաջ երթալ: Կամ կրնայ ըլլալ, որ առողջական հարց մը ունիս եւ միջոց չունիս բժշկի երթալու: Գիտեմ, որ շատեր օրը օրին կ'ապրին եւ չեն գիտեր, թէ ճիշդէ պիտի գայ իրենց յաջորդ կերակուրը:

Երբ անհաւատալիօրէն դժուար բանէ մը կ'անցնինք, կրնանք փորձուիլ հրաժարիլ եւ յանձնուիլ: Սակայն լաւագոյն բանը, որ կրնանք ընել մեր վստահութիւնը Աստուծոյ վրայ դնելն է եւ յոյսով լեցուն մնալը: Բայց ճիշդ ինչ է յոյսը:

Յոյսը այն վստահ ակնկալութիւնն է, որ լաւ բան մը պիտի պատահի: Անիկա մօտէն կապուած է մեր հաւատքին եւ մեր հաւատացած բաներուն կամ համոզումներուն հետ: Երբ կը համարձակինք յուսալ, մեր կեանքը կը յորդի ուրախութիւնով եւ խաղաղութիւնով:

Թշնամին կ'ուզէ, որ *անյոյս* ըլլանք: Ան կ'ուզէ մեզի համոզել, թէ ամէն բան կորսնցուցած ենք եւ թէ որեւէ բան երբեւէ լաւ պիտի չըլլայ: Բայց Աստուած կ'ուզէ, որ յոյսով լեցուն ըլլանք՝ հաւատալով եւ մեծ բաներ ակնկալելով Իրմէ: Իրականութեան մէջ Աստուածաշունչը կ'ըսէ, թէ Ան «յոյսի Աստուած»ն է (տե՛ս Հռոմայեցիներուն 15.13)՝ գութով եւ նոր սկիզբներով լեցուն:

Մանուկ հասակիս հօրս կողմէ սեռային, բերանացի եւ զգացական բռնաբարումի ենթարկուելու պատճառով, իմ մէջս զարգացած էր անյոյս կեցուածք մը: Այնքան ժխտական բաներ պատահած էին ինձի, որ սկսած էի միշտ վատ բաներ ակնկալել, Քրիստոնեայ ըլլալէս ետք իսկ:

Սակայն կրնամ անկեղծօրէն ըսել, թէ Աստուած փոխակերպած է զիս ժխտական եւ յոռետես ըլլալէ դէպի մէկու մը, որ յոյսով լեցուն է եւ

շարունակ Աստուծոյ բարութիւնը կ'ակնկալէ ամէն դարձուածքի վրայ: Քիչ-քիչ Աստուած օգնեց ինծի, որ յայտնաբերեմ յոյսի զօրութիւնը եւ թէ աստիկա ինչ կը նշանակէ իմ խորհուրդներուս, բառերուս, կեցուածքներուս եւ կեանքիս բոլոր մարզերուն մէջ: Ուստի հիմա երբ դժուար պայմաններու դէմ յանդիման կը գտնուիմ կամ արգելքի մը կը հանդիպիմ, կը կառչիմ յոյսին՝ գիտնալով, որ Աստուած ամէն բան բարիի գործակից պիտի ընէ ինծի համար:

Թերեւս մեծ ցաւ ապրած ես, յուսախաբութիւն կամ դժուարութիւն մը եւ չես կրնար պատկերացնել, թէ կացութիւնդ պիտի բարելաւուի: Թշնամին կ'ուզէ համոզել քեզ, թէ կացութիւնդ բնաւ պիտի չփոխուի: Բայց Աստուած կ'ուզէ, որ գիտնաս, թէ Ինք կը սիրէ քեզ, եւ կրնաս վստահիլ Իրեն, որ հրաշք մը պիտի գործէ քու խառնաշփոթութեանդ մէջ: Քու բաժինդ՝ յոյսդ բնաւ չկտրելն է. ակնկալել, որ Իր բարութիւնը ի յայտ պիտի գայ որեւէ վայրկեան:

Այս էջերը կը պարունակեն այն կարեւորագոյն դասերէն ոմանք, զորս Աստուած սորվեցուցած է ինծի այդ մարզին մէջ. դասեր, որոնք պիտի զօրացնեն հաւատքդ եւ օգնեն քեզի, որ կեանքին մօտենաս նոյն-նոր նայուածքով մը կամ վերաբերումով մը:

Ես յաճախ կ'ըսեմ, թէ՛ այն մարդը, որ յոյսով լեցուն կը մնայ, կը շարունակէ հաւատալ Աստուծոյ Խօսքին եւ կը մերժէ տեղի տալ, անպարտելի կ'ըլլայ: Որովհետեւ նոյնիսկ կեանքի փոթորիկներուն մէջ երբ

քու վստահութիւնդ Իր վրան կը դնես, Ան կրնայ քու կեանքդ լեցնել Իր անհաւատալի խաղաղութեամբ եւ ուրախութեամբ, եւ կրնայ կացութիւնը քու բարիքիդ համար շրջել:

Չեմ գիտեր, թէ ճիշդ ինչ բաներէ անցած ես կեանքիդ մէջ կամ ինչ բանէ կ'անցնիս ներկայիս: Բայց գիտեմ, որ Աստուած կը սիրէ քեզ մե՛ծ սիրով, Անոր աչքը քու վրադ է եւ Ան պիտի օգնէ քեզի (տե՛ս Հռոմայեցիներուն 8.38-39: Սաղմոսներու 33.18):

Ան ամէն յոյսի Աստուածն է, եւ Ա՛ն է, որ կրնայ քու ամէնէն դժուար ժամանակներդ անգամ մեծ, աղուոր բանի մը վերածել:

Գլուխ 1

ՅՈՅՍՈՎ ԼԵՑՈՒՆ

Երբեմն կ'ըսես, թէ մենք «ցոյց տուր»ի սերունդն ենք: Կ'ուզենք տեսնել նախքան հաւատալը: Իրականութեան մէջ մեծ մասս դժուարութիւն ունինք հաւատալու, թէ Աստուած կը գործէ մեր կեանքին մէջ մինչեւ որ մեր բնական աչքով տեսնենք, որ բան մը կը պատահի:

Բայց Աստուած այդ ձեւով չի գործեր. Ան քույիսներու ետին կը գործէ: Կրնայ ըլլալ, որ չես տեսներ, որ բան մը կը պատահի, բայց կը հաւատամ, որ Աստուած կը գործէ կեանքիդ մէջ ներկայիս: Կը հաւատամ, որ Ան ծրագիր մը ունի օգնելու զաւակներուդ հետ կապուած հարցերուդ, ամուսնութեանդ կամ այն բաներուն մէջ, որոնց համար տարիներէ ի վեր կ'աղօթես:

Երեմիայի 29.11-ը կ'ըսէ, թէ Աստուած բարի ծրագիր մը ունի կեանքիդ համար... *քու վերջնական արդիւնքիդ կամ վիճակիդ վերաբերեալ քեզի յոյս տալու համար:* Այլ խօսքով, Աստուած առիթ մը կը փնտռէ քեզի բարիք ընելու համար:

Թերեւս քեզի համար դժուար է ինքզինքդ պատկերացնել իբրեւ դրական, հաւատքով լեցուն մէկը, որ լեցուն է յոյսով: Եթէ ըսածս ճիշդ է, ուստի

գիտեմ ճիշդ ինչպէս կը զգաս: Կարգ մը մարդիկ պարզապէս կը վախնան յուսալու, որովհետեւ շատ յուսախաբութիւն ապրած կ'ըլլան եւ այնպէս կը զգան, որ յաւելեալ ցաւ չեն կրնար տանիլ:

Բայց հարց չէ բնաւ, որովհետեւ Աստուած «յոյսի Աստուած»ն է՝ գութով եւ նոր սկիզբներով լեցուն (տէն Հռոմայեցիներուն 15.13), եւ Իրեն հետ բնաւ ուշ չէ հաւատալ, յոյսով սպասել, յուսալ եւ ակնկալել սկսիլը:

ՄԵԾ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ...

Յոյսի մէկ սահմանումն է՝ «բարեհաճ եւ ինքնավրստահ ակնկալութիւն»:

Կը հաւատամ, որ շատ անգամ մենք կրաւորական կեցուածք կ'առնենք՝ որոշելով, թէ՛ պարզապէս «պիտի սպասենք եւ տեսնենք» եթէ բան մը պիտի փոխուի կամ պատահի որպէսզի ամէն բան լաւ ընթանայ մեզի համար: Բայց Աստուած կ'ուզէ, որ դիտումնաւոր կամ նպատակաւոր կերպով ակնկալենք: Ան կ'ուզէ, որ գործօն կերպով ակնկալենք լաւ բանի մը պատահիլը:

Ուստի հարց կու տամ քեզի. *Ի՞նչ կ'ակնկալես:*

Ի՞նչ կը տեսնես միտքիդ եւ երեւակայութեանդ մէջ: Ի՞նչ ձեռով կը խօսիս ապագայիդ մասին: Երբ առտուն արթննաս, կը մտածես. *Լաւ, փորձենք այս օրն ալ անցընել:* Կամ արդե՞ծք կ'արթննաս յուսալից սպասումով, թէ՛ այսօր կրնայ ըլլալ այն օրը երբ դուն ճեղքումդ պիտի ստանաս:

Անգլերէնի մէջ երբ կին մը յղի կ'ըլլայ, կ'ըսենք, թէ «ան կ'ակնկալէ»: Եւ որքան յառաջանայ յղութիւնը, այդքան ակնկալութիւնը կը մեծնայ գալիքին համար:

Իմ յղութիւններս յատկապէս իւրայատուկ էին, քանի որ չորս զաւակներս ալ արգանդիս մէջ կրեցի իրենց ծնելու թուականէն գրեթէ մէկ ամիս աւելի: Բժիշկս ինծի ըսաւ, թէ միակ կինն էի, որ ինքը գիտէր, որ փիղի մը չափ յղի մնացեր էր:

Իւրաքանչիւր յղութեանս վերջաւորութեան ամէն օր կ'արթննայի եւ կ'ըսէի. «Այսօր է այդ օրը. պէտք է այդ օրը ըլլայ»: Բոլոր պայուսակներս լեցուած եւ պատրաստ կ'ըլլային: Շարունակ կը ստուգէի եթէ ամէն բան տեղն էր՝ վստահ ըլլալով, որ երեխասս պիտի ծնէր որեւէ վայրկեան: Ամէն անգամ որ սուր ցաւ մը կը զգայի, կը մտածէի. *Ահա՛ այս է: Երեխան կու գայ՛:*

Ճիշդ այդպէս է, որ Աստուած կ'ուզէ, որ ըլլաս Իրեն հետ: Ան անհաւատալի ծրագիր մը ունի կեանքիդ համար եւ կ'ուզէ, որ ակնկալես, որ լաւ բաներ պիտի պատահին անկիւնադարձին:

Յոյսը կ'ըսէ. «Կրնայ ըլլալ, որ կացութիւնը այսպէս է երկար ժամանակէ ի վեր, բայց Աստուած անկարելիին Աստուածն է, եւ պարագաները կրնան փոխուիլ»:

ԱՐԴԵՕՔ ԴՈՒՆ ՅՈՅՍԻ ԲԱՆՏԱՐԿԵԱԼ ՄԸՆ ԵՍ:

Ինչպէս ըսի, ես ինծի ծանօթ ամէնէն ժխտական անձն էի: Գաւաթին կէսը պարապ տեսնող անձ մըն

էի. ամէն հարցի ժխտական կողմը կը տեսնէի:

Ատոր համար այդքան խղճալի վիճակի մէջ էի: Կասկածը եւ ժխտականութիւնը մեզ վար կը քաշեն... բայց յոյսը ուրախութիւն կ'արձակէ:

Յոյս կը նշանակէ՝ ունենալ դրական մտայնութիւն կամ կեցուածք: Յուսալից անձը բացարձակապէս կը մերժէ ըլլալ որեւէ ձեւով ժխտական: Հակառակ անոր որ կը ճանչնայ կեանքի փոթորիկները եւ կ'անցնի անոնց մէջէն, ան յոյսով լեցուն կը մնայ իր միտքին մէջ, կեցուածքին եւ խօսակցութեան:

Կը կարծեմ, որ շատ անգամ կ'իյնանք այն ծուղակին մէջ, որ սպասենք մինչեւ որ լաւատես կամ դրական զգանք: Բայց յոյսը դրական ըլլալու եւ մեր զգացածով չապրելու որոշումն է: Ճշմարտութիւնը այն է, որ երբ հաստատ որոշում կու տանք դրականօրէն մտածելու, յուսալի խորհուրդներ ունենալու, մեր զգացումները վերջ ի վերջոյ անոնց կը հետեւին:

Ես շատ կը սիրեմ Զաքարիայի 9.12-ը:

Տէրը կ'ըսէ. «[Ապահովութեան եւ բարգաւաճման] ամբողջը վերադարձէք դժոխ՝ յոյսի բանտարկեալներ: Այսօր ալ արհկա կը յայտարարեմ, թէ քու նախկին բարգաւաճմանդ կրկնապարհկը պիտի վերականգնեմ քեզի»:¹

Ինչ կը նշանակէ ըլլալ «յոյսի բանտարկեալ»:
Կը նշանակէ, թէ անկախ անկէ թէ ինչ կը պատահի

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփրիֆայր Պայպըլ, Քլասիք Էպիշոըն (AMPC)* տարբերակէն

մեր կեանքերուն մէջ, կը մերժենք դադրիլ յուսալէ եւ վստահելէ ամէն բան լաւի դարձնելու Աստուծոյ կարողութեան:

Երբ յոյսի բանտարկեալ կ'ըլլաս, թշնամին չի գիտնար ինչ ընէ: Ան կրնայ քեզ ոմբակոծել ժխտական խորհուրդներով, բայց ան իշխանութիւն չունի վստահելու քեզի երբ վճռական ես ամբողջ վստահութիւնդ դնելու Աստուծոյ վրայ:

Աստուած կ'ուզէ օրհնել քեզ եւրկենապատիկը տալ քեզի՝ անցեալի ցաւիդ կամ տառապանքիդ եւ կորսուած բաներուն դիմաց (տես Եսայիի 61.7): Եւ մեր բաժինը ընելը մեծ տարբերութիւն կ'ընէ: Մեր բաժինը՝ հաւատալ, վստահիլ եւ յուսալն է:

ԺԱՄԱՆԱԿՆ Է ԽԱՐԻՍԻՆ ԵՆՏԵԼՈՒ

Եբրայեցիներուն 6.19-ը կ'ըսէ. «*[Հիմա] ունինք այս [յոյսը] իբրեւ հաստատար եւ հաստատարուն խարիսխ մը մեր շունչին համար [անիկա չի սահիր եւ չի կտրուիր ո՛վ ալ կոխէ անոր վրայ]*»²:

Եկէք բաժին-բաժին բացատրենք այս համարը: Կարծեմ բոլորս ալ գիտենք, թէ ինչ է խարիսխը: Երբ կ'ուզես, որ նաւ մը մէկ տեղի մէջ կենայ, խարիսխը կը նետես, եւ անիկա կ'արտօնէ, որ որոշ տարածութեան մէջ շարժի միայն:

Կ'ըսէ, թէ յոյսը «շունչին խարիսխն է»: Մեր շունչը

2 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփլիֆայր Պայպըլ*, *Քլասիք Էպիշոփն* (AMPC) տարբերակէն

մեր միտքը, մեր կամքը եւ մեր զգացումներն են: Մեր շունչը մեզի կ'ըսէ, թէ ինչ կը մտածենք, ինչ կ'ուզենք եւ ինչ կը զգանք:

Ուստի այդ բոլորը ինչ կը նշանակեն: Կը նշանակեն, թէ երբ ամէն բան մոայլ կամ տոգոյն կ'երեւի... երբ այնպէս կը թուի, թէ ոչ մէկ բան իմաստ ունի եւ այնպէս կը թուի, թէ Աստուծոյ խոստումները երբեք պիտի չիրականանան մեր կեանքին ընթացքին, յոյսը կ'ըլլայ մեր խարիսխը, որ մեզ ոտքի կը կանգնեցնէ եւ կ'ըսէ. «Սպասէ: Պիտի կատարուի»:

Բայց եկէք ատիկա քայլ մը եւս անդին տանինք: Եբրայեցիներուն 6.19-ը կ'ըսէ, թէ յոյսը մեր խարիսխն է եւ թէ՛ *«[անհկա չի սահիր եւ չի կտրուիր ո՛վ ալ կոխէ անոր վրայ]»*:

Յոյսը մեր խարիսխն է եւ այն բանն է, որ պատճառ կ'ըլլայ, որ «քայլ առնենք»: Կարգ մը մարդիկ Աստուծոյ խոստումները եւ զօրութիւնը չեն վայելեր, պարզապէս որովհետեւ հաւատքով քայլ չեն առներ: Այդ քայլ առնելն է, որ Աստուծոյ խոստումները գործի կը լծէ:

Օրինակ մը տամ: 40 տարի եւ աշխարհի շուրջը պտտած եմ՝ ուսուցանելով Աստուծոյ Խօսքը: Բայց տակաւին կան ժամանակներ՝ խորհրդաժողովի մը սկսելէն առաջ, երբ օծուած, ատակ կամ պատրաստ չեմ զգար ընելու այն ինչ որ քիչ ետք պիտի ընեմ:

Պատահած է, որ բեմ բարձրանալէս առաջ մտածած եմ. *Աստուած իմ, իսկապէս կը յուսամ, որ կը յայտնուիս այսօր հոս, քանի որ այլապէս լուրջ*

խնդիր կ'ունենամ: Ապա մինչ քայլ կ'առնեմ ընելու այն ինչ որ կը հաւատամ, որ Աստուած ինձմէ խնդրած է, որ ընեմ, Աստուած միշտ ալ կը յայտնուի եւ կ'օգնէ ինձի պատգամս փոխանցելու մէջ: Ոչ մէկ անգամ յուսախաբ ըրած է զիս:

Ձեզմէ շատերուն պարագային Աստուած պարզապէս ձեզի կը սպասէ, որ քայլ առնէք դէպի այդ յոյսի խարիսխը: Ան պարզապէս ձեզի կը սպասէ, որ ընէք ձեր բաժինը, որպէսզի ինք յայտնուի ձեր կեանքին մէջ եւ ընէ բան մը, որ հիացմունք պիտի պատճառէ ձեզի:

Մի՛ արտօներ, որ կեանքի պայմանները քեզ շեղեն քու ընթացքէդ: Նետէ՛ խարիսխդ եւ քայլ առ դէպի յոյսի վստահելի հիմը: Որովհետեւ երբ յոյսդ կը դնես Աստուծոյ վրայ, *յուսախաբ պիտի չըլլաս:*

Գլուխ 2

Ինչ Ընել Երբ Չես Կրնար Դուրս Գալ Կացութենէ մը

Պատահանձ է, որ այնպէս զգաս, որ չես կրնար դուրս գալ կացութենէ մը: Պատահանձ է, որ կեանքիդ մէջ հասնիս տեղ մը, որ անելի նման կը թուի քեզի... այնպէս՝ թէ կարծես այլեւս ընտրութիւններ չունիս:

Ես այդ կացութեան մէջ եղած եմ շատ անգամ, եւ վստահ եմ, որ մարդոց մեծ մասն ալ նոյնպէս: Բայց շատ երախտապարտ եմ, որ տարիներու ընթացքին Աստուած ինձի սորվեցուցած է, որ նոյնիսկ եթէ անելի մը առջեւ կը գտնուինք, չկայ կացութիւն մը, որ դժուար է Աստուծոյ համար:

Եկէք սկսինք նայելով Յովսէփի պատմութեան Ծնունդներու Գիրքին մէջ (կարդա՛ Ծնունդներու 37-50): Աստուածաշունչը կ'ըսէ, թէ ան իր հօրը 12 զաւակներուն մէջէն ամէնէն սիրելին էր, եւ իր եղբայրները շատ կը նախանձէին իրմէ այդ պատճառով:

Օր մը Յովսէփ իր եղբայրներուն պատմեց երազ մը, որ տեսած էր: Երազին մէջ բոլորն ալ իրեն

երկրպագութիւն կ'ընէին: Պէտք չկայ ըսելու, որ եղբայրները լաւ ձեռով չընդունեցին աստիկա:

Իբրեւ արդիւնք, եղբայրները հաւաքուեցան՝ որոշելու համար ինչպէս ազատին Յովսէփէն: Նախ եւ առաջ անոնք զայն նետեցին գուրի մը մէջ՝ մտադրելով հոն ձգել զինք, որպէսզի մեռնի: Բայց յետոյ որոշեցին ծախել զինք գերութեան՝ այդ տեղէն անցնող իսմայէլացի վաճառականներու: Ապա ծրագիր մը ըրին համոզելու իրենց հայրը, թէ՛ Յովսէփ մեռած էր:

Ինչպէս հաւանաբար գիտես, այս պատմութիւնը յաղթանակով կ'աւարտի: Յովսէփ Փարաւոնէն ետք երկրորդ ամէնէն կարելոր անձնաւորութիւնը կ'ըլլայ, կը միանայ իր ընտանիքին եւ ամէն բան կը ներուի:

Յովսէփի հետ պատահածը փաստ է, թէ կեանքի մէջ ինչ բանէ ալ, որ անցնիս, միշտ յոյս կայ: Կրնաս իրականացնել քեզի համար Աստուծոյ նպատակը, որովհետեւ ամէն բան կարելի է Աստուծոյ համար:

Բայց մենք պէտք է կեդրոնանանք գուրին եւ պալատին միջեւ պատահածներուն վրայ: Այդ ժամանակաշրջանին Յովսէփի կեանքը ունեցաւ շարք մը անկիւնադարձներ: Բայց անոր նկարագրի մէկ յատկանիշը, որ զինք այդ յաղթական աւարտին առաջնորդեց՝ յարատեւութիւնն էր: Աստուծոյ նկատմամբ իր հաւատքին շնորհիւ՝ Յովսէփ բնաջանձնուեցաւ, չհրաժարեցաւ:

ՀՐԱԺԱՐԻԼԸ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ ՁԷ

Կրնայ ըլլալ, որ մենք ալ ատեն-ատեն իյնանք գուբի մը մէջ: Անիկա կրնայ ըլլալ հիանդութեան գուբը, ֆինանսական դժուարութեան գուբը, յարաբերութիւններու մէջ գոյութիւն ունեցող հարցերու կամ այլ հարցերու գուբը: Երբ աստիկա պատահի, պէտք է որոշած ըլլաս, որ ինչ ալ ըլլայ կացութիւնը, դուն պիտի ջանձնուիս:

Միշտ յիշէ, որ Աստուծոյ գործերուն մասին լաւ վկայութիւն ունենալու համար, նախ պէտք է քննութիւններուն յաջողինք: Յիսուս մեզի ըսաւ.

«Աշխարհի մէջ հալածանք, փորձութիւններ, նեղութիւններ եւ յուսախաբութիւններ ունիք, բայց ուրախացէ՛ք [քանք եղէք, ինքնավստահ, վստահ, անվախ], որովհետեւ ես յաղթեցի աշխարհին [զրկեր եմ զանիկա ձեզի վնաս հասցնելու իշխանութենէն եւ յաղթած եմ անոր՝ ձեզի համար]» (Յովհաննէսի 16.33³):

Անպայման որ պիտի անցնիս դժուար բաներէ: Երբեմն կրնաս նոյնիսկ յանձնուիլ ուզել: Բայց եթէ պարզապէս կրնաս սպասել եւ վստահիլ Աստուծոյ՝ դժուարութիւններու մէջէն անցած ատենդ, Ան կրնայ վերականգնել քեզ: Ան կրնայ առնել բոլոր

3 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփիլիֆայտ Պայպըլ*, *Քլասիք Էդիշըն* (AMPC) տարբերակէն

վատ բաները եւ լաւ բան մը ընել անոնցմով (տես Նոռմայեցիներուն 8.28):

Կ'ըսուի, թէ 1941-ին Ուինսթըն Չըրչըլ հետեւեալը ըսած է Հարոու Սքուլի շրջանաւարտներուն ուղղած իր խօսքին մէջ.

«Երբեք, երբեք, երբեք, երբեք, երբեք մի՛ հրաժարիք: Մեծ կամ փոքր, խոշոր կամ մանր բանի մէջ... երբեք մի՛ հրաժարիք»:

Չեմ գիտեր եթէ ատիկա միակ բանն էր, որ ան ըսաւ, բայց կը հաւատամ, որ Սուրբ Հոգին այդ մէկ բանը կը խօսի մեզմէ շատերուն այսօր. «Մի՛ հրաժարիր, որովհետեւ Աստուած շատ բաներ պահուած ունի կեանքիդ համար»:

Շատ դիւրին է հրաժարիլ ուզելը երբ պայմանները կը դժուարանան: Երբեմն մարդիկ կանգ կ'առնեն իրենց եղած տեղին մէջ եւ չեն գիտնար ինչպէս դուրս գան անկէ, ուստի կը կարծեն, որ հրաժարիլը աւելի դիւրին պիտի ըլլայ:

Կրնայ ըլլալ, որ իրենք զիրենք բաւարար չափով խելացի կամ տաղանդաւոր չեն զգար. թերեւս անցեալին ցաւալի բան մը պատահած էր իրենց հետ, կամ կրնայ ըլլալ, որ ձախողած են բանի մը մէջ կամ սոսկալի սխալներ ըրած են անցեալին:

Բայց Սուրբ Հոգին մեզի կու տայ ոյժը եւ կարողութիւնը ճնշելու եւ յառաջ երթալու եւ հասնելու մեր յաղթանակին, նոյնիսկ եթէ ամէն բան մեր

ծրագրածին համաձայն չընթանայ:

Ձախողութիւն չի նշանակեր, թէ չկան ուրիշ ընտրութիւններ: Կրնաս սորվիլ անցեալի սխալներէդ. կրնամ փորձառաբար ըսել, որ անցեալդ կրնայ լաւ ուսուցիչ մը ըլլալ: Երբ ուրիշ ամէն բան կը ձախողի, նորէն փորձէ: Առնուազն կը սորվիս, թէ ինչը կը յաջողի եւ ինչը ոչ, եւ այդ հաշիով առջեւ կ'երթաս: Կրնաս արգելքդ վերածել աւելի իմաստուն եւ հոգեւորապէս աւելի հասուն դառնալու առիթի մը:

Աստուած կ'ուզէ, որ լաւ կեանք մը ապրինք: Սակայն վստահութիւնը եւ յարատեւութիւնը անհրաժեշտ են: Սուրբ Հոգին պիտի առաջնորդէ մեզ հաւատքի փոքր քայլերով՝ հասցնելու համար այն բարի ծրագիրներուն, զորս Աստուած ունի մեզմէ իւրաքանչիւրիս համար: Մեր բաժինը՝ առնել է այդ քայլերը... *եւ երբեք չհրաժարիլ:*

ԻՆՉ ԸՆԵԼ ԵՐԲ ԿԸ ՏԱՌԱՊԻՍ

«Գուր»ին մէջ եղած ատենդ ունեցած տեսակէտդ կրնայ մեծ տարբերութիւն ընել:

Յիշենք, որ անիկա քննութեան ժամանակ մըն է... ժամանակ մը երբ նկարագիրդ կը զարգանայ: Այդ ժամանակաշրջանը եւ երբեմն կը կոչեն «լուութեան տարիները», որովհետեւ ժամանակ մըն է երբ կրնաս այնպէս զգալ, որ շատ բան չի պատահիր կեանքիդ մէջ:

Կամ կրնայ ըլլալ, որ մեծ ցաւէ եւ

դժուարութիւններէ կ'անցնիս եւ այնպէս կը զգաս, որ Աստուած բան մը չ'ըներ ատոր համար:

Բայց շատ կարեւոր է, որ վստահիս Աստուծոյ այդ ժամանակի ընթացքին, որովհետեւ Ան կը գործէ սիրտիդ մէջ՝ քեզ ատելի Քրիստոսի նման դարձնելու համար:

Ուստի ինչ պէտք է ընես երբ քու «գութ»իդ մէջն ես:

- *Մի՛ հրաժարիր:* Դէմ դիր այն փորձութեան թէ՛ կացութենէդ դուրս գալու ձեւ չկայ: Յիսուս է ճամբան: Ասիկա քու ժամանակդ է Իրեն մօտենալու եւ հետեւելու:
- *Խուսափէ՛ զԱստուած մեղադրելէ կամ մտածելէ, թէ Ան քեզ կը պատժէ մեղքի մը համար:* Ան պարզապէս առիթը կ'օգտագործէ կեանքիդ մէջ գործելու: Եւ նոյնիսկ որ միշտ հաճելի չեն դիմագրաւած բաներդ, Իր նպատակը միշտ պիտի ըլլայ քու բարիքիդ համար:
- *Ըրէ՛ այն ինչ որ ճիշդ է նոյնիսկ երբ կը փառապիս, նոյնիսկ երբ կը զգաս, որ բան մը սխալ է կամ երբ ուրիշներ վատ ձեւով կը վարուին հետդ:* Լաւ բան մը ըրէ քանի՛ հոգիի, որ կրնաս եւ հրքան յաճախ որ կրնաս:
- *Մի՛ քաշուիր, երեսդ ծներ կամ մեկուսացներ դուն քեզ ուրիշներէ:* Յիշէ՛, որ կրնաս ըլլալ խղճալի կամ հզօր, բայց չես կրնար ըլլալ երկուքը: Շատ անգամ Աստուած կրնայ

ուրիշները գործածել՝ քաջալերելու համար քեզ այդ ժամանակներուն ընթացքին:

- *Պահէ՛ խօսքդ եւ կատարէ՛ յանձնառութիւններդ:* Ասիկա նկարագիր կերտելու ժամանակ է, եւ դուն կը պատրաստուիս «պալատ»ին մէջ տեղդ առնելու համար:
- *Մի՛ դադրիր հաւատալէ...* Յոյսդ մի՛ կտրեր, թէ՛ Աստուած կրնայ բարելաւել կացութիւնդ:

ԹՅՈՒՓՔՆԵՐ ԿՐԱՅԷԴ

Կրնայ ըլլալ, որ լսած ես պատմութիւնը իշու մը, որ փոսի մը մէջ ինկաւ:

Տեսնելով պատահածը, անոր տէրը պահ մը մտածեց այդ մասին եւ նկատելով, որ փոսը շատ խորունկ էր եւ էշը՝ շատ ծեր, որոշեց թաղել զինք հոն:

Օգնութեան կանչեց իր բարեկամները եւ դրացիները եւ սկսան թիերով հող թափել փոսին մէջ:

Սկիզբը էշը գոռաց՝ սարսափած ըլլալով պատահածէն: Սակայն յետոյ անոր տէրը նկատեց, որ ան լուծ էր եւ մտածեց, թէ հաւանաբար մեռած էր արդէն: Բայց էշը չէր մեռած:

Երբ տէրը վար նայեցաւ փոսին մէջ, տեսաւ, որ ամէն անգամ, որ հողի կոյտ մը թափած էին անոր կռնակին, էշը թօթափած էր զանիկա եւ անոր վրայ կոխած՝ սեղմելով զանիկա իր սմբակներուն

տակ: Ատիկա շարունակուած էր ժամեր մինչեւ որ վերջապէս էշը իր ոտքերուն տակ բաւարար հող հաւաքած էր փոսէն ելլելու համար:

Կրնանք բան մը սորվիլ այդ էշէն: Կեանքը կրնայ երբեմն-երբեմն հող նետել մեր վրան: Ատիկա կրնայ ըլլալ մեր յարաբերութիւններու, ֆինանսներու կամ առողջութեան մարզին մէջ: Բայց ատիկա կ'ըլլայ այն ժամանակը երբ կը սորվինք ինչպէս հետեւիլ Սուրբ Հոգիի առաջնորդութեան: Ան ցոյց պիտի տայ քեզի ինչպէս թօթափել վրայէդ հողը եւ զանիկա ոտքիդ տակը սեղմելով՝ բարձրանալ: Փոսէդ մինչեւ պալատդ ճամբուն ընթացքին Ան իւրաքանչիւր քայլի մէջ քեզի պիտի տայ ակնարկներ՝ գալիք լաւ բաներուն մասին:

Միշտ պիտի ըլլան յաղթահարելիք արգելքներ: Միշտ պիտի ըլլան «հարցեր», զորս պէտք է շրջանցենք: Բայց նաեւ պէտք է ըլլան վերստին ընելներ, երկրորդ առիթներ եւ նոր սկիզբներ:

Երբեք ուշ չէ. պարզապէս մի՛ հրաժարիր: Մինչ կ'ընես քու բաժինդ եւ այն ինչ որ կրնաս՝ մինչ կառչած կը մնաս յոյսին, առջեւ կ'երթաս եւ կը մերժես յոյսդ կտրել Աստուծմէ, Ան հաւատարիմ պիտի ըլլայ ընելու այն ինչ որ դուն չես կրնար:

Ուստի եթէ կանգ առած ես տեղ մը, յառաջ չես երթար եւ չես գիտեր ինչ ընել, մի՛ հրաժարիր կամ յանձնուիր, քանի որ կատարեալ դիրքին մէջն ես թարմ սկիզբ մը ունենալու:

Գլուխ 3

Յուսալից Կեցուածք Ընտրել

Փոքր տարիքիս բռնաբարուած ըլլալով, մէջս զարգացած էր անորոշ վախ մը թէ՛ միշտ վատ բան մը պիտի պատահէր: Կրնայ ըլլալ անծնական փորձառութեամբդ կը հասկնաս ըսածս:

Այնքան վատ բաներ պատահած էին ինձի, որ հասած էի տեղ մը, ուր միշտ կ'ակնկալէի, որ վատ բան մը պատահէր՝ նոյնիսկ Քրիստոնեայ դառնալէս ետք:

Կը յիշեմ այն առտուն երբ վերջապէս աղօթեցի եւ Աստուծոյ հարցուցի. «Ինչ է ասիկա: Ինչո՞ւ շարունակ այսպէս կը զգամ»:

Աստուած խօսեցաւ սիրտիս եւ ըսաւ. «Չարագուշակութիւն է»: Այդ բառը բնաւ չէի լսած ատկէ առաջ, բայց քանի մը օր ետք զանիկա գտայ Առակներու 15.15-ին մէջ, որ կ'ըսէ.

«Յուսահատ եւ վշտալից մարդուն բոլոր օրերը չար են [անցկալից խորհուրդներու եւ չարագուշակութիւններու պատճառով], բայց ան որ ուրախ սիրտ ունի, մշտական խնճոյքի մէջ է»:⁴

4 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփոխֆայր Պայպլը*, *Քլասիք Էփիզըն* (AMPC) տարբերակէն

Բոլորս ալ կեանքի մէջ դժուար ժամանակներէ կ'անցնինք, եւ այդ ժամանակներուն դիւրին է վախնալ ապագայէն եւ ունենալ անցկալից խորհուրդներ եւ չարագուշակութիւններ: Բայց մենք պէտք ունինք հասնելու այն կէտին, ուր երբ դժուարութիւնները կու գան, կը սորվինք համաձայնիլ Աստուծոյ եւ Անոր Խօսքին հետ:

Կրնանք մեր հաւատքը արձակել, ըսելով. «Գիտեմ, որ Աստուած կը սիրէ զիս: Ան պիտի հոգայ ինձի եւ պաշտպանէ զիս: Կը հաւատամ, որ ինձի պիտի տայ շնորհքը եւ ոյժը ընելու այն ինչ որ պէտք ունիմ ընելու, եւ լաւ բան մը յառաջ պիտի գայ այս բոլորէն»:

ՄԻՎ ԱԿՆԱՐ

Աստուծոյ մտադրութիւնը չէ բնաւ, որ մենք խղճալի ըլլանք կամ «սոսկալի օր մը» ունենանք, նոյնիսկ երբ պայմանները մեր ուզածին պէս չեն: Ան կ'ուզէ, որ մենք լաւ բաներ ակնկալենք եւ մնանք յոյսով լեցուն, անկախ մեր պայմաններէն:

Եւ ահա երկու բառեր, որոնք պիտի օգնեն, որ աստիկա ընես. մի՛ վախնար:

Ի՞նչ է վախնալը: Անիկա պարզապէս այն ակնկալութիւնն է, որ տհաճ փորձառութիւն մը պիտի ունենաս. անիկա յոյսին ճիշդ հակառակն է:

Առանց նոյնիսկ անդրադառնալու, կը կարծեմ, որ շատեր վախով կ'անցընեն իրենց օրը: Կը վախնան գործի երթալէն, խճողումէն, պնակները

լուալէն, լուացք ընելէն, խոտերը կտրելէն, ընթրիք պատրաստելէն եւայլն, եւայլն:

Սակայն վախը կրնայ մեր ուրախութիւնը գողնալ եւ մեր օրը արել: Վախը կրնայ մեզ անյոյս ձգել: Փոխարէնը կը քաջալերեմ, որ չնեղանաս կամ չազդուիս բաներէ, որոնց համար բան մը չես կրնար ընել: Ընտրէ՛ ուրախ մնալ եւ արտօնէ՛, որ Աստուած հոգայ քեզի:

Ամէն կացութեան մէջ պէտք ունինք առնելու կեցուածք մը, որ կ'ըսէ. «Կրնամ ընել ամէն բան, որ պէտք է ընեմ եւ պիտի չդադրիմ հաճոյք առնելէ կեանքէս, անկախ անկէ, թէ ի՞նչ կը պատահի: Այս բանը ես չծրագրեցի, բայց գիտեմ, որ Աստուած կրնայ ամէն բան բարիի գործակից ընել ինձի համար»:

Անշուշտ չեմ ըսեր, որ ատիկա միշտ պիտի լուծէ բոլոր հարցերդ: Սակայն չվախնալ որոշելը վստահաբար կեանքդ կը բարելաւէ:

ՓՈՔՐ ԲԱՆԵՐՈՒ ՄԷՋ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ԳՏՆԵԼ

Յաղթական կեանք ապրիլը կապ չունի միայն կեանքի «մեծ» բաներուն հետ. անիկա կը սկսի փոքր բաներով: Տէրը կ'ուզէ, որ կարենանք յաջողութիւն եւ ուրախութիւն ունենալ մեր կեանքի բոլոր մարզերուն մէջ, եւ վախին յաղթելը ասոր մեծ բաժինն է: Դրական, յուսալից կեցուածք որդեգրելու մեր ընտրութիւնը կրնայ մեծ տարբերութիւն ընել:

Վստահաբար կեանքի մէջ պիտի ըլլան բաներ, որոնք դժուար են կամ նուազ հաճելի: Սակայն պէտք չունին մեր վրայ ազդելու կամ մեր օրը արելու: Ընտրութիւնը մերն է թէ՛ ինչ կեցուածք կ'ընտրենք առնել:

Չարմանալի է, թէ ինչպէս կրնանք խղճալ մենք մեզի եւ ապա արտօնել, որ մեր կեցուածքը արէ լաւ օր մը մեզի համար եւ ուրիշներու համար: Վստահ եղիր, գիտեմ... Ես բաւական լաւ էի «նահատակի» դերը խաղալու մէջ երբ հարցը կը վերաբերէր տան գործերը ընելուն:

Յաճախ տան մէջ կը շրջէի «ՕՖ-փոնֆ»ով, քիթիս տակէն մրթմրթալով. «Ամէն մարդ կ'ակնկալէ, որ ամէն բան ես ընեմ հոս: Տէյվը կ'ելլէ կոլֆ կը խաղայ, իսկ պզտիկները ամէն տեղ կը թափփփեն: Ես ալ միայն ճաշ կ'եփեմ, պնակները կը լուամ եւ իրենց լուացքը կ'ընեմ: Կ'ուզեմ գիտնալ, թէ ես որոնն հոգն եմ»:

Ճշմարտութիւնը այն էր, որ ոչ ոք կը ստիպէր ինծի, որ ընէի այդ բաները: Ես կ'ընտրէի ընել զանոնք, որովհետեւ կը սիրեմ իմ ընտանիքս: Սակայն ես հազուադէպօրէն հաճոյք կը ստանայի բանէ մը, որովհետեւ շատ վճռական էի ժխտական վերաբերում ունենալու:

Ծանօթ կը թուի՞: Քու կացութիւնդ կրնայ տան գործերու հետ կապ չունենալ, բայց բոլորս ալ երբեմն կ'իյնանք մենք մեզի խղճալու եւ բանէ մը վախնալու փորձութեան մէջ:

Նոյնիսկ երբ վատ կամ անյարմար բաներ կը

պատահին մեզի, մենք կրնանք տակաւին ընտրել դրական ձեռով պատասխանել: Երբ ատիկա կ'ընենք, Աստուծոյ հետ համաձայնած կ'ըլլանք, որովհետեւ Աստուած միշտ դրական է:

ԴՐԱԿԱՆԻՆ ՎՐԱՅ ԿԵԴՐՈՆԱՑԻՐ

Ես յաճախ կը քաջալերեմ մարդիկը, որ «Ուրախութեան Իսաղը» խաղան: Ինչ է ատիկա: Երբ ժխտական կացութեան մը դէմ յանդիման կը գտնուիս, դիտումնաւոր կերպով ընտրէ՛ տեսնել դրականը անոր մէջ:

Օրինակի համար, եթէ խճողումի հանդիպիս, ըսէ՛. «Դանդաղօրէն կը յառաջանամ եւ կ'ուշանամ, բայց թերեւս Աստուած կը պաշտպանէ զիս արկածէ մը, որ պիտի պատահէր եթէ անելի արագ ընթանայի»:

Ատիկա կը յաջողի որեւէ կացութեան մէջ, ըլլայ անիկա մեծ կամ փոքր: Նոյնիսկ եթէ գործդ կորսնցնելու չափ կարեւոր բան մըն է, դուն կրնաս ընտրել դրականի շեղել քու կեդրոնացումդ եւ ըսել. «Կրնայ ըլլալ, որ անգործ եմ, բայց հիմա առիթը ունիմ տեսնելու, թէ Աստուած ինչպէս նախկինէն անելի լաւ գործ մը պիտի տայ ինծի»:

Աստուածաշունչը կ'ըսէ. «[...] Տէրը [լրջօրէն] կը սպասէ [ակնկալելով, նայելով եւ փափաքելով], որպէսզի գթութիւն ընէ ձեզի [...] որպէսզի ձեզի ողորմի [...]» (Եսայիի 30.18)⁵:

⁵ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփլիֆայր Պայպլը, Քլասիք Էփիշըն (AMPC)* տարբերակէն

Անկախ անկէ, թէ կեանքը ի՛նչ կը հանէ քու առջեւ,
Աստուած ծրագիր մը ունի զանիկա բարելաւելու.
Ծրագիր մը՝ լեցուն յոյսով եւ բարի բաներով: Կը
քաջալերենք քեզ, որ համաձայնիս Անոր հետ:

Ամէն օր օրդ սկսէ դրական, յուսալից կեցուածքով
մը եւ ընտրէ՛ չվախնալ: Մինչ ատիկա կ'ընես, կը
հաւատամ, որ պիտի սկսիս գտնել ուրախութիւն
կեանքիդ ամէն մէկ բաժինին մէջ:

Գլուխ 4

Աստուծոյ Վստահիլ Փորձորիկէն Անցնելու Ատեն

Տարիներու ընթացքին սորված եմ, որ բան մըն է Աստուծոյ վստահիլ բանի մը համար՝ ըսենք որպէսզի փոխէ բան մը կամ մէկը կեանքիդ մէջ, բայց բոլորովին ուրիշ բան է վստահիլ Աստուծոյ բանի մը մէջէն անցած ատենդ:

Ես մեծապէս կը մխիթարուիմ Եսայիի 43.2-3-ով, որ կ'ըսէ. *«Երբ ջուրերէն անցնիս, ես քեզի հետ պիտի ըլլամ, երբ գետերէն անցնիս, քեզ պիտի չընկղմեն. երբ կրակի մէջէն քալես, պիտի չայրիս, բոցը քեզ պիտի չվառէ: Արդարեւ ես՝ Տէրս, քու Աստուածդ եմ, Իսրայէլի Սուրբը, քու Փրկիչդ [...]»:*

Երբ դժուար պայմաններէ կ'անցնիս, շատ կարեւոր է, որ յիշես, թէ Աստուած քեզի հետ է, եւ կրնաս վստահիլ Իրեն, որ պիտի օգնէ քեզի, որ անցնիս անոնցմէ:

Օրինակի համար, կրնայ դժուար ըլլալ հաւատքի մէջ մնալը երբ կ'անցնիս պայմաններէ, որոնք անհասկնալի են քեզի համար կամ երբ կեանքը

արդար չի թուիր քեզի: Յատկապէս դժուար է երբ կը գգաս, որ կ'ընես այն ինչ որ պէտք է ընես, բայց ճիշդ արդիւնք չես քաղեր:

Կամ հետեւեալը կրնայ ըլլալ. կը տեսնես մէկը, որ ճիշդ բանը չ'ըներ, եւ սակայն այնպէս կը թուի, թէ քեզմէ աւելի լաւ արդիւնք կը ստանայ: Ժամանակներ պիտի ըլլան կեանքիդ մէջ երբ այնպէս պիտի թուի, թէ ամէն բան կը շարժի եւ ոչ մէկ բան ապահով է: Եւ միակ իրական պատասխանը կամ լուծումը Աստուծոյ վստահիլն է, եւ շարունակ վստահիլը Անոր:

Ես նաեւ փորձառաքար սորված եմ, որ Աստուած այդ ժամանակները պիտի գործածէ մեր օգուտին համար: Երբ կեանքը կը թուի անկայուն ըլլալ, Ան մեր պայմանները պիտի գործածէ՝ օգնելու համար մեզի, որ աւելի մօտենանք Իրեն եւ ամուր կերպով կառչինք մեր փրկութեան ժայռին՝ Յիսուս Քրիստոսի, զոր կարելի չէ շարժել կամ ցնցել (տես Սաղմոսներու 62.2,6):

«ԱՃԻԼ» ԴԺՈՒԱՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՆ

Ասիկա կրնայ ծիծաղելի թուիլ, բայց ես հասած եմ տեղ մը, ուր արդէն կը հաւատամ, որ փորձութիւնները եւ դժուարութիւնները կրնան մեր լաւագոյն բարեկամները ըլլալ: Ինչո՞ւ: Որովհետեւ Տէրը կը գործածէ զանոնք մեզի սորվեցնելու համար, մարգելու համար եւ օգնելու համար, որ աճինք այնպիսի ձեւերով, որ չենք կրնար առանձին:

Իրականութեան մէջ Յակոբոսի 1:2-3-ը կ'ըսէ.

«Եղբայրներ, դուք ձեզ շափ երջանիկ համարեցե՞ք՝ երբ զանազան փորձություններու մէջ կ'իյնաք: գիտցե՞ք, որ փորձութիւնը համբերութիւն կը ծնի, եթէ ձեր հաւատքը փորձին դիմանայ»:

Փորձութիւնները եւ դժուարութիւնները Աստուծմէ չեն գար, բայց Ան պիտի գործածէ զանոնք մեզ զօրացնելու համար եւ օգնելու, որ ունենանք ատի խաղաղ, կայուն եւ գոհունակ կեանք մը:

Կեանքի դժուար ժամանակներուն է, որ կը դառնանք այն անձը, որ կ'ուզենք ըլլալ: Երբ կը հանդիպինք կացութեան մը, որ «մեր գլուխէն վեր է», ատիկա կ'օգնէ մեզի, որ Իր վրան դնենք մեր վստահութիւնը՝ գիտնալով, որ չենք կրնար լուծել մեր բոլոր հարցերը:

Տէրը կ'ուզէ, որ Իրեն գանք՝ զօրութիւն ստանալու համար եւ հասնինք տեղ մը, ուր կրնանք կայուն մնալ նոյնիսկ կեանքի փորձութիւնները դիմագրաւելու ժամանակ: Ան կ'ուզէ, որ մենք ուրախութիւն եւ գոհունակութիւն ունենանք Իր մէջ, նոյնիսկ երբ մեր պայմանները կատարեալ չեն (տես Նէեմիայի 8.10):

Ճիշդ ինչպէս ադամանդները կը կազմուին մեծ ճնշումի տակ, Աստուած յաճախ մեր կեանքի այդ դժուարութիւնները կը գործածէ մեզ խոնարհեցնելու համար, մեր նկարագիրը զարգացնելու համար, Իր պատկերին համաձայն մեզ փոխակերպելու համար... եւ պատրաստելու համար մեզ այն բարի բաներուն համար, որ ունի մեզի տալիք ապագային:

ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ՕԳՆԵՆ ՄԵԶԻ, ՈՐ ՎՍՏԱՀԻՆՔ

Մեծ ազատութիւն կայ Աստուծոյ վստահելուն մէջ: Երբ բան մը մեր փափաքածին պէս չ'ընթանար, փոխանակ նեղանալու եւ գայթակղելու, կրնանք վստահիլ, որ Ան ծրագիր մը ունի, որ աւելի լաւ է քան մերինը, եւ Ան վերջաւորութեան ամէն բան բարիի գործակից պիտի ընէ մեզի համար (տես Նոմայեցիներուն 8.28):

Պէտք է հասկնանք ասիկա, որովհետեւ երբեմն երբ խնդիրներ կ'ունենանք, կը գայթակղինք Աստուծմէ կամ նոյնիսկ ուրիշներէ, որոնք կ'օրհնուին: Կրնանք ունենալ փարիսեցիական կեցուածք մը, որ կ'ըսէ. «Բայց ես աւելի լաւ Քրիստոնեայ մըն եմ քան դուն: Ես արժանի եմ այդ օրհնութիւններուն»:

Օրինակի համար, թերեւս գործիդ մէջ պաշտօնի բարձրացում մը կ'ուզես ունենալ, բայց ուրիշ մէկը կը ստանայ այդ բարձրացումը: *Ինչ պէտք է ընես:*

Կրնաս գայթակղիլ, փարիսեցիի պէս վարուիլ եւ դուն քեզի վնասել հոգեւորապէս: Կամ կրնաս վստահիլ Աստուծոյ եւ ըսել. «Տէր, եթէ հոս է, որ կ'ուզես ըլլամ հիմա, ապա ժպիտով կամ գոհունակութեամբ պիտի ծառայեմ գործատիրոջս: Եւ ես գիտեմ, որ եթէ դուն կ'ուզես զիս ուրիշ տեղ մը դնել, կրնաս ասիկա ընել Քու կատարեալ ժամանակիդ»:

Ես սորված եմ, որ Աստուած մեզմէ խելացի է... Երբեմն Ան կ'ուշացնէ մեր ուզածը մեզի տալը,

որովհետեւ տարբեր նպատակ մը ունի միտքին մէջ. նպատակ մը, որ աւելի լաւ է քան որեւէ բան, որ մենք կրնանք երեւակայել:

Օրինակի համար, շատ անգամ Տէրը ինծի արտօնած է, որ բաներէ անցնիմ դժուար ձեւով: Երբեմն չափազանց դժուար եղած է, յատկապէս երբ տեսած եմ ինչպէս ուրիշներ աւելի արագ ճեղքումներ կ'ունենան նոյն այդ մարզերուն մէջ:

Բայց երբ Աստուած կ'արտօնէ, որ ես այդ ճամբայէն քալեմ, Ան կ'ուզէ, որ ապրիմ եւ հասկնամ մարդոց կրած դժուարութիւնները, որպէսզի կարենամ կարեկից ըլլալ անոնց ցաւին եւ օգնել իրենց, որ յաջողութեամբ անցնին անոր մէջէն:

Եթէ կեանքիս մէջ դժուար ժամանակներէ չանցնէի՝ պայմաններ, զորս Տէրը գործածեց, որպէսզի օգնէ ինծի, որ աճիմ եւ փոխուիմ, վստահաբար պիտի չկարենայի օգնել այն թիւով մարդոց, որոնց կրնամ օգնել այսօր:

Աստուած բնաւ չխոստացաւ մեզի խնդիրներէ զուրկ կեանք մը, բայց Ան կը խոստանայ երբեք չձգել եւ չլքել մեզ (տես Եբրայեցիներուն 13.5): Դժուար ժամանակներուն մենք կրնանք մխիթարուիլ գիտնալով, որ Ան մեծապէս կը սիրէ մեզ եւ արդէն ունի ծրագիր մը մեզի օգնելու:

ԱՍՏՈՒԱԾ ՀԵՏԴ Է ԱՅԴ ԲՈԼՈՐԻՆ ՄԷՋ

Կ'ուզեմ քաջալերել քեզ, որ վճռական որոշում տաս վստահելու Աստուծոյ կեանքիդ բոլոր

բաժիններուն մէջ: Երբ կեանքի փոթորիկները կը հարուածեն քեզ կամ երբ կ'ունենաս փորձառութիւններ, զորս չես հասկնար, այդ ատեն է, որ պէտք է ընտրես շարունակել վստահիլ Իրեն՝ անկախ անկէ, թէ ինչ կը մտածես կամ կը զգաս եւ անկախ անկէ, թէ քեզի համար ինչ երեւոյթ ունին քու պայմաններդ:

Եւ երբ կը վստահիս Աստուծոյ ամէն բանի մէջ, Ան կայուն բան մը պիտի տայ քեզի. *քեզի պիտի տայ Իր Անձը ատելիով:*

Դժուար պայմանէ մը կ'անցնիս այսօր: Կայ փորձութիւն մը, որ կը սպառնայ ճնշել քեզ: Եթէ այո, կը քաջալերեմ, որ պահ մը կանգ առնես եւ աղօթես:

«Տէ՛ր, շնորհակալ եմ, որ միշտ հետս ես. լաւ ժամանակներուն ինչպէս նաեւ այն արեւն երբ կեանքը դժուար է: Կը խնդրեմ, որ օգնես ինձի, որ ատելի մօտենամ Քեզի երբ կեանքը անհասկնալի կ'ըլլայ ինձի համար: Կը վստահիմ Քեզի եւ գիտեմ, որ ամէն բան բարիի գործակից պիտի ընես ինձի համար: Յիսուսի անունով կ'աղօթեմ: Ամէն»:

Յիշէ՛, որ այն բաները, որոնցմէ կ'անցնիս հիմա յաւերժապէս այդպէս պիտի չմնան: Երբ ես դժուար ժամանակէ մը կ'անցնիմ, ես ինձի կը յիշեցնեմ, թէ՛ «Ա՛յս ալ պիտի անցնի»: Մինչ այդ կրնաս որոշել, որ վստահութիւնդ պիտի դնես Աստուծոյ վրայ եւ արտօնես Իրեն, որ քեզի տայ ուրախութիւն այն դժուար պայմաններուն մէջ իսկ, որոնցմէ կ'անցնիս:

Նաեւ լաւ է կարդալ Աստուծոյ Խօսքը եւ քաջալերել դուն քեզ Եսայիի 41.10-ի նման համարներով: Աստուած կ'ըսէ. «Մի՛ վախնար [վախնալիք բան մը չկայ], որովհետեւ քեզի հետք եմ. շուրջդ մի՛ դիպեր սարսափած եւ սուկար, որովհետեւ ես քու Աստուածդ եմ: Ես պիտի զօրացնեմ քեզ եւ կարծրացնեմ քեզ դժուարութիւններուն դիմաց: Այո՛, **պիտի օգնեմ քեզի**» (Շեշտադրումը՝ մեր կողմէ) ⁶:

Ինչ բանէ ալ, որ կ'անցնիս այս պահուն, կը քաջալերեմ, որ դիմանաս եւ ջանձնուիս: Որոշում տուր, որ լաւ վերաբերում պիտի ունենաս եւ պիտի շարունակես վստահութիւնդ դնել Աստուծոյ վրայ: Որովհետեւ Յիսուս հետդ է ամէն փոթորիկի մէջ, դուն աւելի զօրացած դուրս պիտի գաս միւս կողմէն:

⁶ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփլիֆայր Պայպլը, Քլասիք Էփիշոն (AMPC)* տարբերակէն

Գլուխ 5

Ամէն Բան Նոր

Երբ յուսախաբ եղած ես եւ անյոյս կը զգաս, շատ կ'օգնէ, որ յիշես այն բոլոր դէպքերը երբ Աստուած օգնած է քեզ անցեալին: Քաջալերական է նաեւ, որ դուն քեզի յիշեցնես ուրիշներու հանդէպ Աստուծոյ հաւատարմութեան մասին. քեզի պէս մարդոց, որոնք խիստ կարիքը ունեցած են Աստուծոյ օգնութեան:

Նկատամձ ես Աստուածաշունչի այն բոլոր մարդիկը, որոնց Աստուած նոր սկիզբ շնորհեց:

Մովսէս ծեր մարդ մըն էր նախքան այրող մորենիին քով Տիրոջ հետ հանդիպումը, եւ ան կանչուեցաւ Աստուծոյ կողմէ՝ ազգ մը առաջնորդելու: Ատկէ առաջ սակայն ան 40 տարի պահուրտած էր անապատին ետեւի բաժինը: Ան գաղափար չունէր, թէ ինչ ծրագրած էր Աստուած (տես Ելքի 1–4):

Դաւիթ՝ խոնարհ հովիւ պատանի մը, օծուեցաւ Իսրայէլի թագաւորը ըլլալու համար: Ան էապէս ոչ մէկն էր՝ աննշան տեղէ մը եկած. վերջին մարդը, որ ունէ մէկը իբրեւ թագաւոր պիտի ընտրէր: Բայց Աստուած գործածեց զինք՝ Իր ժողովուրդը առաջնորդելու համար (կարդան Ա.Թագաւորներուն 16):

Պետրոս՝ առաքեալ մը, որ ուրացաւ Յիսուսը,

ներուեցաւ եւ կանչուեցաւ կեանքին մնացեալ օրերը քարոզելով եւ զԱստուած փառաւորելով անցընելու (տես Ղուկասի 22.54-62: Յովհաննէսի 21: Գործերը 3):

Եւ **Պօղոս**՝ որ ժամանակին կը հալածէր Աստուծոյ ժողովուրդը, փոխակերպուեցաւ Դամասկոսի ճամբուն վրայ եւ վերջաւորութեան գրեց Նոր Կտակարանին մեծ մասը (կարդա՛ Գործերը 9.1-22):

Երբ մտածես Աստուածաշունչի այն բոլոր մարդոց մասին, որոնց Աստուած ներեց եւ զորս փրկեց ու գործածեց հզօր ձեւերով, կը կասկածի՞ս, որ Ան կարող է նոյնը ընելու քեզի համար:

Մեր Աստուածը յոյսի Աստուած է: Ան առաջին փորձիդ ձախողելէդ ետք նորէն փորձել քաջալերող, երկրորդ առիթներ տուող եւ թարմ սկիզբներու ու նոր նախաձեռնութիւններու Աստուած է: Եւ Ան սահման չէ դրած այդ առիթներուն եւ նոր սկիզբներուն համար:

ՅՈՅՍԻ ԱԶՔՈՎ ՏԵՄՆԵԼ

Յիշէ՛, որ յոյսը մեր շունչին խարիսխն է: Երբ ամէն բան մութ կ'երեւի եւ պատասխան մը չունինք, այդ ատեն է, որ յոյսը գործի կ'անցնի՝ յիշեցնելու համար մեզի, թէ նոր սկիզբը անկիւնադարձին է:

Երբ այնպէս կը թուի, թէ ուրիշ ամէն մարդ կ'օրհնուի իսկ մենք յոգնած ենք եւ կ'ուզենք յանձնուիլ, յոյսն է, որ կ'ամրապնդէ մեր սիրտը եւ կը պահէ մեզ Աստուծոյ խոստումներուն հանդէպ հաւատքի մէջ:

Դարձեալ՝ յոյսը բարեհաճ եւ ինքնավստահ ականկալութիւն մըն է: Անիկա դրական կեցուածք մըն է եւ այն ուրախ ականկալութիւնը կամ սպասումը, թէ՛ լաւ բան մը պիտի պատահի:

Իրական յոյսը անփոյթ, անյստակ, «պարզապէս սպասենք եւ տեսնենք, թէ ինչ կը պատահի» կեցուածք մը չէ: Այլ՝ անիկա հաւատալ է եւ վստահիլ, թէ այն ինչ որ Աստուած խոստացաւ՝ պիտի կատարէ: Աստուած պարզապէս առիթներ կը փնտռէ Իր գաւակներուն բարիք ընելու համար, եւ Ան կ'ուզէ, որ ականկալենք եւ սպասենք ատոր:

Ա.Թեսաղոնիկեցիներուն 5.8-ին մէջ յոյսը կը նկարագրուի իբրեւ սաղաւարտ մը: Ուստի մեր *մտածածը* պէտք է բաւական կարեւոր ըլլայ: Մեր վերաբերումը եւ մեր ականկալութիւնը շատ կապ ունին անոր հետ, թէ ինչ կը մտածենք եւ կը խօսինք:

Կը քաջալերեմ քեզ, որ ամէն առտու նախ եւ առաջ կառավարես քու միտքերդ եւ խօսքերդ: Ամէն առտու երբ արթննաս, մի՛ ընդունիր այն տեսակի միտքեր, որ կ'ըսեն՝ «Լաւ... պիտի փորձեմ այս օրն ալ ձեռով մը անցընել»:

Փոխարէնը, լաւ բաներ ականկալէ Աստուծմէ: Այս ձեռի բաներ մտածէ՛ եւ հոշակէ՛.

Աստուած, շնորհակալ եմ այս օրուան համար: Գիտեմ, որ կը սիրես զիս եւ բարի ծրագիր մը ունիս ինձի համար այսօր: Առանց Քեզի ես ոչինչ կրնամ ընել, բայց Քրիստոսով կրնամ ընել ինչ որ պէտք

է ընեն: Եւ Քու օգնութեամբդ ես պիտի ունենամ լաւ վերաբերում եւ դրական խորհուրդներ:

Ապա ակնկալէ, որ ճեղքում մը ունենաս եւ նոր սկիզբ մը: Ըսէ՛. «Այսօր կրնայ սպասուած օրը ըլլալ»:

Կարելի է, որ անդրադառնանք, որ չենք կրնար ապրիլ մեր զգացումներուն առաջնորդութեամբ եթէ կ'ուզենք ունենալ դրական, յոյսով լեցուն կեանք մը: Երբ ժխտական զգացումները գան, եթէ տեղի չտանք անոնց եւ չկերակրենք զանոնք, անոնք պիտի մեռնին:

Ուստի մի՛ արտօներ դուն քեզի, որ իյնաս այն ծուղակին մէջ, որ սպասես, որ յոյսով լեցուն զգաս: Այլ՝ որոշէ՛ ըլլալ յոյսով լեցուն: Երբ գիտակից որոշում մը կու տաս, թէ՛ դրական եւ հաւատքով լեցուն խորհուրդներ պիտի ունենաս ամբողջ օրուան ընթացքին, զգացումներդ վերջաւորութեան պիտի համապատասխանեն քու որոշումիդ:

ԴՈ՛ՒՐՍ ԵԿՈՒՐ ՎՐԱՆԷԴ

Քանի մը տարի առաջ Տիրոջ հարցուցի. «Ինչո՞ւ կեանքիս մէջ խանդավառիչ եւ յատուկ բաներ չեն ըլլար այլեւս»: Աստուած խօսեցաւ սիրտիս եւ ըսաւ. «Ճօյս, ես տակաւին շարունակ կ'ընեմ այդ բաները: Պարզապէս դուն վարժուեցար անոնց»:

Աստուած կ'ուզէ, որ ապրինք մեր կեանքին մէջ Անոր ըրած բարիքներով հիացած. գործօն կերպով նկատենք այն ճշմարտապէս հիանալի բաները, զորս ան կ'ընէ մեզի համար: Ինչո՞ւ: Որովհետեւ

երբ կ'ապրինք հիացած, երբեք առանց յոյսի պիտի ջրլլանք: Եկէք նայինք Աբրահամի պատմութեան:

Աստուած առատօրէն օրինած էր Աբրահամը: Սակայն կար մէկ բան, որ ինք եւ իր կինը՝ Սառան, չունէին. զաւակ: Աբրահամ ըսաւ. «[...] “Տէր Աստուած, ինչ կրնաս փալ ինձի, քանի որ ես կ'երթամ [այս աշխարհէն] առանց զաւակի [...]”» (Ծնունդներու 15.2⁷):

«Եւ Ան [Աստուած] զայն դուրս հանեց [իր վրանէն՝ լուսինի յոյսին փակ] եւ ըսաւ. “Հիմա դէպի երկինք նայէ եւ աստղերը հաշուէ, եթէ կարենաս հաշուել զանոնք”: Ապա ըսաւ անոր. “Այսպէս պիտի ըլլան քու սերունդներդ”» (Ծնունդներու 15.5⁸):

Հակառակ անոր որ Աբրահամի պայմանները դժուար կը թուէին, Տէրը զայն հանեց իր վրանէն դուրս, որպէսզի հիացնէր զինք եւ յիշեցնէր, թէ Ան կրնար անկարելին ընել:

Կը հաւատամ, որ բոլորս ալ կրնանք պէտք եղածէն անելի ժամանակ անցընել «մեր վրանին մէջ», նայելով մեր հարցերուն: Ատոր համար Աստուածաշունչը կը թելադրէ մեզի, որ կեանքի շեղումներէն անդին նայինք եւ կեդրոնանանք Յիսուսի վրայ՝ մեր հաւատքի հիմնադիրին ու կատարելագործողին (տէն Եբրայեցիներուն 12.2):

7 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփոխֆայր Պայպլը*, *Քրիստոս Էփոշըն* (AMPC) տարբերակէն

8 Նոյնը

Ամէն անգամ, որ կ'որոշենք աղօթել, Իր Խօսքը կարդալ կամ պարզապէս կեդրոնանալ այն մեծ գործերուն վրայ, զորս Ինք ըրած է մեզի համար անցեալին, ատիկա յոյս կ'արտադրէ: Եւ Աբրահամի նման, շուտով կը սկսինք մտածել. «Ուսու, թերեւս ինծի համար ալ այդպիսի բան մը կրնայ ընել»:

Երբ դժուար պայմաններէ կ'անցնիս եւ յուսալքուած կը զգաս, ատիկա ճիշդ ժամանակը կ'ըլլայ, որ դուրս գաս վրանէն ու տեսնես, թէ ինչ ըսելիք ունի Աստուած: Երբ ատիկա կ'ընես, պիտի տեսնես, որ Ան պարզապէս կը սպասէ՝ քեզ հիացնելու համար:

ԿՐԿՆԱՊԱՏԻԿԸ

Եթէ ինծի պէս ես, քեզի համար դիւրին կ'ըլլայ ուրիշի մը համար յոյս ունենալը: Շատ ջանք չ'ուզեր, որ տեսնեմ դրական կողմը եւ քաջալերեմ ուրիշը, ըսելով. «Ամէն բան լաւ պիտի ըլլայ: Պարզապէս վստահէ՛ Աստուծոյ եւ ան կացութիւնը պիտի շրջէ քեզի համար»:

Բայց երբ հարցը կը վերաբերի մեզի... Ատիկա արդէն տարբեր պատմութիւն է: Երբ ցաւի կամ յուսախաբութեան մէջ ենք, կը միտինք մտածել. *Ամէն բան վերջացաւ: Շատ ուշ է արդէն ինծի համար:*

Բայց շատ ուշ չէ... Երբեք շատ ուշ չէ թարմ սկիզբ մը ունենալու համար երբ Քրիստոսով կեանք ունիս: Անցեալդ չէ քու ճակատագիրդ կամ բաժինդ: Եթէ մերժես հրաժարիլ յոյս ունենալէն եւ արտօնել Սուրբ

Հոգիին, որ առաջնորդէ քեզ, Աստուած ոչ միայն պիտի վերականգնէ այն ինչ որ ունէիր, այլև կեանքդ պիտի բարելաւէ:

Կը սիրեմ Յովելի 2.25-26-ը: Մինչ կը կարդաս, սիրտիդ մէջ ընդունէ՛ այս հատուածը: Ընդունէ՛ զանիկա քու կեանքիդ համար այսօր:

«Ձեզի պիտի հապուցանեմ այն տարիներուն պտուղները, որոնք մարտիր, ջորեակը, գրուիճն ու խառնիճը կերան, այսինքն իմ մեծ զօրագունդս՝ որ ձեր մէջ դրկեցի: Առաքօրէն պիտի ուտէք ու կշտանաք, ու Տէրոջ՝ ձեր Աստուծոյն անունը պիտի գովաբանէք, որ ձեզի համար սքանչելիքներ ըրաւ. իմ ժողովուրդս երբեք պիտի չամչնայ»:

Երբ պատանի էի, ունէի այն համոզումը, որ փոքր տարիքիս բռնաբարուած ըլլալս յաւերժօրէն արատաւորած էր զիս: Այնպէս կը զգայի, որ չէի կրնար ըլլալ ուրիշներու նման կամ ապրիլ այն կեանքը, որ կրնայի ապրիլ:

Բայց ամէն բան կարելի է Աստուծոյ համար: Երբ մենք անելներ տեսնենք, ինք նոր սկիզբներ կը տեսնէ: Ան կ'ուզէ առնել մեր անցեալի ցաւը եւ ոչ միայն բժշկել զանիկա, այլև կ'ուզէ վերականգնել մեզի համար շատ աւելին քան ինչ որ պիտի ունենայինք սկսելու համար:

Միասին կարդանք Եսայիի 61.7-ը, որ կ'ըսէ.
«Փոխանակ ձեր ամօթին՝ կրկնակի պիտի ուրախանաք, ու փոխանակ նախապիծի՝ ձեր

*ժառանգութեան մէջ պիտի ցնծաք. ուստի ձեր երկրին
մէջ կրկինին պիտի տիրանաք, յաւիտենական
ուրախութիւն պիտի ունենաք»:*

Ես յաճախ կ'ըսեմ, թէ Աստուծոյ հետ եթէ առաջին
ծրագիրը ձախողի, ան միշտ ունի երկրորդ ծրագիր
մը, որ նոյնիսկ անլի լաւ է քան առաջինը: Աստուած
վերականգնումի եւ նոր սկիզբներու Աստուածն է:
Եթէ արտօնես Իրեն, Ան քեզի պիտի տայ նոր, թարմ
սկիզբ մը. Ան քեզի պիտի տայ կրկնակին: Եւ անիկա
քու երեւակայածէդ անլի լաւը պիտի ըլլայ:

Գլուխ 6

Ինչպէս Վեր Նայիլ Երբ Զգացումներդ Վար Են

Բոլորս ալ կեանքի մէջ կ'ունենանք ժամանակներ երբ մեր զգացումները վար կ'ըլլան կամ անտրամադիր կ'ըլլանք զանազան պատճառներով: Բայց չենք կրնար արտօնել, որ մեր պայմանները հակակշռեն մեր զգացումները:

Սատանան կը փորձէ մեր միտքը լեցնել ժխտական խորհուրդներով, որոնք վերջաւորութեան պատճառ կ'ըլլան, որ կորսնցնենք մեր ուրախութիւնը եւ տխուր զգանք: Ան յուսահատեցնող մըն է, եւ կ'ուզէ մեզ վար քաշել զգացական, հոգեւոր, ֆինանսական իմաստով եւ ամէն ձեւով, որ կրնայ:

Իսկ Յիսուս մեր Քաջալերողն է, եւ Ան եկաւ, որպէսզի մեզ վեր վերցնէ: Ան եկաւ, որպէսզի մեզի տայ արդարութիւն, խաղաղութիւն եւ ուրախութիւն: Ան կ'ուզէ, որ մենք լաւ բաներ ակնկալենք մեր ապագային համար, եւ կ'ուզէ յոյսով լեցնել մեզ:

Ամէն մարդ կ'անցնի յուսախաբութեան եւ նեղութեան ժամանակներէ՝ չկատարուած ծրագիրներու կամ երազներու պատճառով: Երբ պայմանները մեր յուսացածին պէս չեն ընթանար, բնական է, որ յուսալքուած զգանք եւ յուսախաբ ըլլանք:

Բայց պետք է զգոյշ ըլլանք, թէ ինչ ձեւով կը վարուինք այդ զգացումներուն հետ, քանի որ եթէ շատ ժամանակ անցընենք անոնց մէջ, ատիկա կրնայ մեզ առաջնորդել ընկճուածութեան:

Սաղմոսներու 30.5-ը մեզի կ'ըսէ՝ «[...] Իրիկունը լաց կայ, բայց առպուն՝ ցնծութիւն»:

Երեւոյթներ կամ պայմանները կրնան մեզի ժամանակատրապէս տխուր զգացնել, բայց մենք պետք չէ տխուր մնանք: Եթէ տխուր մնանք, թշնամին կը շահագործէ այդ բաց դուռը եւ զանիկա հրելով կը բանայ ու կը մտնէ մեր կեանքերուն մէջ՝ ատելի լուրջ խնդիրներ պատճառելով:

Սակայն Աստուծոյ հետ, երբ յուսախաբ կ'ըլլանք, միշտ կրնանք որոշում տալ յուսադրուելու: Կրնանք ընտրել Իրեն նայիլ նոր յոյսի համար եւ վերանորոգուած ոյժի՝ յառաջ երթալու համար:

ՈՒՇԱԴԻՐ ԵՂԻՐ ԶԳԱՅՈՒՄՆԵՐՈՒԴ

Եթէ երբեք ընկճուածութիւն ապրած ես, գիտես, որ անիկա շատ իրական բան մըն է: Անիկա կրնայ պատճառ դառնալ, որ մեկուսացած զգանք, առանձին եւ անյոյս. զգանք այնպէս, որ կարծես մեր շուրջը ամէն բան կը փլի:

Գիտեմ, որ ընկճուածութիւնը կրնայ արդիւնքը ըլլալ ֆիզիքական կամ քիմիական անհաւասարակըշուութեան, եւ չեմ ուզեր անտեսել այդ

պատճառները: Կան ժամանակներ երբ Տէրը պիտի առաջնորդէ մէկու մը, որ այցելէ մասնագէտ կամ վարպետ բժիշկի մը կամ հոգեբանի մը, որ կրնայ օգնել իրեն, որ հասնի հարցին արմատին: Կը հաւատամ, որ բժշկական գիտութիւնը կու գայ Աստուծմէ եւ թէ Ան կը գործէ բժիշկներու միջոցաւ՝ մեծ բաներ ընելու համար:

Սակայն շատ մարդոց համար ընկճուածութիւնը նաեւ հոգեւոր հարց մըն է: Գիտէք, Սատանան ընկճուածութիւնը կը գործածէ՝ գողնալու համար մարդուն հոգեւոր ոյժը կամ ազատութիւնը. ան կը փորձէ մեր միտքը լեցնել խաւարով ու մոայլութեամբ եւ զգացապէս մեզ վար քաշել:

Բայց Աստուած կ'ուզէ մեզի օգնել, որ ապրինք ընկճուածութենէ զուրկ կեանք մը: Ան կ'ուզէ լեցնել մեզ Իր ուրախութեամբ, յոյսով եւ մեր կեանքին համար լաւ բաներու ակնկալութեամբ: Իրեն հետ համագործակցելու համար, պէտք է սորվինք չապրիլ մեր զգացումներուն հիման վրայ:

Ես յաճախ ըսած եմ, որ զգացումները կրնան մեր մեծագոյն թշնամիներէն մէկը ըլլալ: Դիտին է առաջնորդուիլ մեր զգացածներով, բայց պէտք է անդրադառնանք, որ զգացումները անկայուն կամ փոփոխական են. անոնք մէկ օրէն միւսը կը փոխուին:

Մենք պէտք չէ հետեւինք ամէն խորհուրդի կամ զգացումի, որ կու գայ մեզի, որովհետեւ անոնք յաճախ կրնան հակասել մեր մասին Աստուծոյ ըսած ճշմարտութիւններուն:

Երկար տարիներ ես շարունակ ընկճուածութեան մէջ էի: Առտուն երբ կ'արթնայի, գլխուս մէջ ձայն մը կ'ըսէր. «Ընկճուած կը զգամ»: Կը կարծէի, որ ատիկա իմ սեփական մտածումս էր եւ չէի անդրադառնար, որ թշնամին կը փորձէր սուտեր խօսիլ միտքիս:

Յետագային երբ Աստուած հրաւիրեց Իրեն հետ աւելի մօտէն քալելու եւ ես սկսայ լրջօրէն սերտել Իր Խօսքը, սորվեցայ, որ պէտք չունէի հետեւելու ամէն զգացումի եւ խորհուրդի, որ կ'ունենայի: Սկսայ բարձրածայն արտայայտուիլ եւ ըսել. «Ես յուսալքուած կամ ընկճուած պիտի չըլլամ»:

Մենք միշտ պիտի ունենանք զգացումներ. անոնք երբեք պիտի չհեռանան մեզմէ: Սակայն մենք ունինք ընտրութիւն, թէ՛ արդե՞՞ք պիտի արտօնենք, որ մեր զգացումները կառավարեն մեր կեանքը կամ ոչ:

ՔՆՆԷ ԿԱՄ ՍՏՈՒԳԷ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԴ

Միտքը ուրիշ գլխաւոր բանալի մըն է յուսալքութիւն եւ ընկճուածութիւն յաղթահարելու: Գիտէ՞իր, որ մտածումներդ իշխանութիւն ունին ազդելու կեանքիդ բոլոր մարզերուն վրայ:

Առակներու 23.7-ը կ'ըսէ. *«Որովհետեւ ան իր անձին մէջ ինչպէս որ կը մտածէ՛ այնպէս է»:*

Մեր միտքը շատ հզօր է: Երբ կ'ընտրենք յամենալ մեր մասին բոլոր ժխտական բաներուն վրայ կամ մեզի պատահած վատ բաներուն վրայ, ատիկա յուսալքութիւն եւ ընկճուածութիւն կը պատճառէ:

Տարիներ առաջ ես կուրծքի քաղցկեղի դէմ պայքարեցայ, եւ ատիկա փորձութեան ժամանակ մըն

էր ինծի համար: Գիտէի, որ շատ ջանք չէր ուզեր զիս անդունդն ի վար գլորելը՝ եթէ արտօնէի, որ միտքս ժխտական դառնար:

Այդ ժամանակ Աստուած սիրտիս վրայ դրաւ, որ միտքս լեցնեմ հետեւեալ բաներով եւ ապա բարձրաձայն ըսեմ զանոնք որքան յաճախ որ կրնամ: Ես կը մտածէի եւ կ'ըսէի.

«Աստուած, գիտեմ, որ կը սիրես զիս: Կը հաւատամ, որ ամէն բան բարիի գործակից կը դարձնես անոնց համար, որոնք կը սիրեն Քեզ եւ կանչուած են Քու ծրագիրներուդ համաձայն: Վստահութիւնս Քու վրայ կը դնեմ, եւ ես պիտի չվախնամ» (տես Հռոմայեցիներուն 8.28,35-39: Յեսուի 1.9: Առակներու 3.5):

Գիտեմ, որքան ժամանակ անցընես կարդալով եւ Աստուծոյ Խօսքին մասին մտածելով, այդքան անիկա քու մէջդ կը մտնէ եւ կը սկսի փոխել քեզ ներսէն դուրս:

Եբրայեցիներուն 4.12-ը կ'ըսէ, թէ Աստուծոյ Խօսքը *կենդանի է եւ ազդու*: Անիկա ունի կարողութիւնը փոխելու անձդ եւ նոյնիսկ ապագադ տեսնելու ձեռք:

Մինչ միտքդ կը լեցնես քու մասիդ Աստուծոյ ըսածներով եւ Անոր խոստումները կ'իրացնես, ատիկա յոյս պիտի ներշնչէ քեզի եւ պիտի կերտէ քու հաւատքդ:

ԸՆԿՃՈՒԱԾՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԴԵՂԱԳԻՐԸ

Ինչպէս նշեցի, ընկճուածութիւնը երբեմն արդիւնքն է ֆիզիքական կամ քիմիական հարցի մը, եւ կը հաւատամ, որ կարեւոր է, որ արտօնենք, որ բժիշկներ

օգնեն մեզի մինչ կը հետեւինք Տիրոջ առաջնորդութեան: Բայց նոյնիսկ երբ բժիշկի մը կ'այցելենք, կը կարծեմ, որ լաւ կ'ըլլայ, որ մեր վստահութիւնը դնենք Աստուծոյ վրայ՝ մեզ Բժշկողին:

Սակայն ընկճուածութիւնը նաեւ շատ յաճախ հոգեւոր պատերազմ մըն է... եւ Աստուածաշունչը մեզի կարեւոր դասեր կամ ցուցմունքներ կու տայ ինչպէս կոուելու մասին:

Եսայիի 61.3-ը մեզի կը թելադրէ՝ *մռայլ հոգիի տեղ գովաբանութեան հագուստ հագնիլ*:

Կրնայ ըլլալ, որ միշտ այնպէս չզգանք, որ կ'ուզենք գովաբանել զԱստուած, բայց Տիրոջ հետ խօսելու համար քանի մը վայրկեան առնելը եւ Իր բարութեան համար շնորհակալութիւն յայտնելը Իրեն ամէնէն հզօր զէնքերէն մէկն է, որ ունինք՝ յուսալքութեան եւ ընկճուածութեան դէմ պայքարելու համար:

Մենք բառացիօրէն Աստուծոյ ներկայութիւնը կը հրաւիրենք մեր կացութեան մէջ, ինչ որ մեզի կը բերէ Անոր ոյժը, խաղաղութիւնը եւ ուրախութիւնը: Փիլիպպեցիներուն 4.4-ը կ'ըսէ. «Միշտ ցնծացէ՛ք Տիրոջմով [զուարճացէ՛ք, դուք ձեզ զուարթացուցէ՛ք Իրմով]. դարձեալ կ'ըսեմ՝ ցնծացէ՛ք»⁹:

Մեր տառապանքին մէջ Տէրը գովաբանելը կարեւորագոյն բանն է, որ կրնանք ընել: Ինչհիւ: Որովհետեւ երբ կ'ընտրենք մեր ուշադրութիւնը կեդրոնացնել Աստուծոյ վրայ եւ ցնծալ Անոր ըրած լաւ

9 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի ԱմփոխՖայր Պայպըլ, Քլասիք Էպիշոփ* (AMPC) տարբերակէն

բաներով, մենք զԱյն մեր հարցերէն անլի կը մեծցնենք:

Ճշմարտութիւնը այն է, որ Աստուած միշտ բարի է, անկախ անկէ, թէ ինչ տողի կ'ունենայ մեր կեանքին մէջ: Ան է մեր ուրախութեան Աղբիւրը, եւ մենք կրնանք Իրեն վազել՝ հանգիստ գտնելու համար որեւէ ատեն որ պէտք ունինք:

Ասիկա ինծի կ'առաջնորդէ Սաղմոսներու 16.11-ին, որ կ'ըսէ. «[...] Երեսիդ առջեւ ուրախութեան յագեցում կայ, քու աջ կողմդ ընդմիշտ հաճոյքներ կան»:

Երբ կը պաշտենք զԱստուած, կը հրաւիրենք Անոր ներկայութիւնը մեր կեանքէն ներս: Ան մեր յուսալքութիւնը եւ տխրութիւնը կը փոխարինէ Իր ուրախութիւնով եւ խաղաղութիւնով՝ մեզի տալով յոյս եւ մեր կացութեան մէջ նոր կեանք փչելով:

Միշտ չենք կրնար փոխել ամէն բան, որ կը պատահի մեր շուրջը, բայց Աստուծոյ ներկայութիւնը պիտի փոխէ մեզ՝ մեր մտածելու ձեւը, մեր զգացումները եւ մեր պայմանները տեսնելու ձեւը:

ԱՐՏՕՆԷ, ՈՐ ԱՍՏՈՒԱԾ ԱՌՆԷ ՔՈՒ ՑԱՒԴ

Մենք երբեք ամբողջապէս ազատ պիտի չըլլանք ցաւ կամ յուսախաբութիւն ապրելէ, բայց պէտք չունինք արտօնելու, որ այսօրուան պատահածները կործանեն մեր վաղը:

Մենք ունինք ընտրութիւն մը: Կրնանք կացութիւնը փոխել՝ որոշելով անտեսել այն պայմանները, որոնք մեզի յուսալքութիւն եւ ընկճուածութիւն կը պատճառեն եւ շարժիլ դէպի այն լաւ բաները, զորս

Աստուած ծրագրած է մեր ապագային համար:

Կը սիրեմ Ա.Պետրոսի 5.9-ը, որ կ'ըսէ. «[...] Դէմ դրէք անոր [Սափանային] [...]»: Շատ կարելոր է անմիջապէս դէմ դնել յուսալքութեան եւ ընկճուածութեան զգացումներուն, որովհետեւ որքան երկար ժամանակ ձգենք, որ մնան այդքան դժուար պիտի ըլլայ անոնց դէմ դնելը:

Տարիներէ ի վեր հետեւեալը կ'ըսեմ. եթէ չարտօնես, որ Սատանան տպաւորէ քեզ իր ըրածներով, ապա ան չի կրնար ճնշում բանեցնել վրադ: Իսկ եթէ չկարենայ ճնշում բանեցնել վրադ, ապա չի կրնար ընկճել քեզ:

Յաջորդ անգամ, որ հանդիպիս կացութեան մը, որ կը սպառնայ վար քաշել քեզ, որոշում տուր դիմել Սուրբ Հոգիին եւ արտօնել, որ Ան լեցնէ քեզ յոյսով: Ընտրէ հաւատալ Աստուծոյ ըսածներուն փոխանակ քու զգացումներուդ: Միտքդ եւ բերանդ լեցուր Աստուծոյ Խօսքին դրական եւ յուսալից բաներով:

Պէտք չունիս արտօնելու, որ յուսալքութիւնը եւ ընկճուածութիւնը իշխեն կեանքիդ վրայ: Երբ կեանքը անբաղձալի պայմաններ կը բերէ քու կողմդ, արտօնէ՛, որ ամէն յոյսի Աստուածը զօրացնէ եւ քաջալերէ քեզ ներսէն դուրս:

Որովհետեւ անկախ անկէ, թէ ինչ բանէ կ'անցնիս, Աստուած պատրաստ եւ պատրաստակամ է քեզի օգնելու, ցաւ տանելու... եւ լաւ բանի մը վերածելու զանիկա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ.

Դժուար ժամանակէ Կ'անցնիս Ներկայիս

Եթէ դժուար ժամանակէ կ'անցնիս ներկայիս, կ'ուզեմ, որ գիտնաս, որ Աստուած կը սիրէ քեզ: Ան կը տեսնէ, թէ ինչ բանէ կ'անցնիս, Ան քեզի հետ է եւ կը փափաքի օգնել քեզի հոն, ուր որ ես:

Սաղմոսներու 34.18-ը կ'ըսէ. *«Տէրը մօտ է անոնց՝ որոնց սիրտը կոտրած է, ու հոգիով ճմլուածները կը փրկէ»:* Երբ մենք կը ցաւինք, Աստուած մեզի հետ կը ցաւի:

Կրնայ ըլլալ, որ այս պահուն կը դիմագրաւես կացութիւն մը, որ անկարելի կը թուի քեզի: Բայց կ'ուզեմ, որ գիտնաս, որ Աստուած կրնայ ամէն բան նոր ընել: Ան կրնայ առնել քու հարցդ եւ լաւ բանի մը վերածել զանիկա:

Եթէ կ'անցնիս դժուար պայմաններէ կամ բանէ մը, որ կը սպառնայ տապալել քեզ, կը քաջալերեմ, որ քանի մը վայրկեան առնես հիմա եւ այս աղօթքը ընես.

Հայր, ես Քեզի պէտք ունիմ հիմա: Կ'ըսես, որ կը սիրես զիս եւ կը տեսնես ճիշդ ընելու... եւ հակառակ անոր, որ ինչ կը զգամ, կ'ընտրեմ հաւատալ Քու

Խօսքիդ: Իմ բոլոր անցածներուս մէջ՝ Քեզի կը նայիմ օգնութեան համար: Ես պէտք ունիմ Քու գօրութեանդ՝ կարենալ յաղթահարելու համար ամէն բան, որ շատ մեծ կը թուի ինծի համար հիմա: Օգնէ ինծի, որ աչքերս Քու վրադ պահեմ: Կը խնդրեմ, որ Դուն Քեզ իրական դարձնես ինծի համար եւ քաջալերես զիս անցնելիք ճամբուս մէջ: Օգնէ, որ ճաշակեմ Քու սէրդ եւ ներկայութիւնդ շօշափելի կերպով: Ես իմ ամբողջ անձս կու տամ քեզի: Յիսուսի անունով: Ամէն:

Նաեւ կը քաջալերեմ քեզ, որ ժամանակ առնես եւ կարդաս վարի աստուածաշնչական հաստուածները: Անձնական փորձառութեամբ կրնամ ըսել, որ Աստուծոյ Խօսքը պիտի փոխէ կեանքդ. մտածելու ձեւդ, զգացումներդ եւ նոյնիսկ ապագադ տեսնելու ձեւդ:

Կը սիրեմ Երեմիայի 29.11-ը, որ կ'ըսէ, թէ Աստուած բարի ծրագիր մը ունի ապագայիդ համար՝ խաղաղութեան ծրագիր մը, քեզի յոյս տուող ծրագիր մը:

Միշտ յիշէ՛, որ Աստուած քու կողքիդ է: Ան անկարելիին Աստուածն է... *եւ այն Աստուածը, որ կրնայ հրաշք գործել ամէն կացութեան մէջ:*

ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՍԻՐԷ ՔԵՐ:

«[...] “Քեզ յաւիտենական սիրով սիրեցի. հետեւաբար քեզ կարեկցութեամբ ինծի քաշեցի”»:

Երեմիայի 31.3

«Թէեւ լեռները հեռանան եւ բլուրները երերան, իմ կարեկցութիւնս քեզմէ պիտի չհեռանայ, ու խաղաղութեանս ուխտը պիտի չերերայ,- կը յայտարարէ Տէրը, որ քեզի կը գթայ»:

Եսայիի 54.10

«Իմ թափառումներս հաշուեցիր. դիր արցունքներս քու տիկիդ մէջ. միթէ անոնք քու գիրքիդ մէջ գրուած չեն»:

Սաղմոսներու 56.8

«Քեզ որովայնի մէջ չծեակերպած քեզ կը ճանչնայի, դուն քու մօրդ արգանդէն չելած՝ քեզ սրբացուցի [...]»:

Երեմիայի 1.5

ԱՍՏՈՒԱԾ ՊԻՏԻ ԳՕՆԷ ՔԵԶԻ:

«Մի՛ վախնար, քանի որ ես քեզի հետ եմ. մի՛ զարհուրիր, քանի որ ես քու Աստուածդ եմ. քեզ պիտի զօրացնեմ, քեզի պիտի օգնեմ, եւ իմ արդարութեանս աջ ձեռքով քեզի նեցուկ պիտի ըլլամ»:

Եսայիի 41.10

«Նոյնիսկ եթէ մահուան շուքի ձորէն քալեմ, ո՛չ մէկ չարիքէ պիտի վախնամ. որովհետեւ դուն ինծի հետ ես [...]»:

Սաղմոսներու 23.4

«Տէրը փնտրուեցի, եւ ինծի պատասխանեց. զիս ազատեց բոլոր երկիւղներէս»:

Սաղմոսներու 34.4

«Երբ ջուրերէն անցնիս, ես քեզի հետ պիտի ըլլամ. երբ գետերէն անցնիս, քեզ պիտի չընկղմեն. երբ կրակի մէջէն քալես, պիտի չայրիս, բոցը քեզ պիտի չվառէ»:

Եսայիի 43.2

ԱՍՏՈՒԱԾ Է ՔՈՒ ՅՈՅՄԴ:

«Քանի որ ձեզի համար մտածած ծրագիրներս գիտեմ,- կը պատգամէ Տէրը.- անոնք բարորոյթեան ծրագիրներ են, ո՛չ թէ չարիքի, ձեզի ապագայ մը ու յոյս մը տալու համար»:

Երեմիայի 29.11

«[...] Որովհետեւ ինք [Աստուած] ըսած է. “Ոչ մէկ ձեռով յուսախաբ պիտի ընեմ քեզ, ոչ ալ պիտի հրաժարիմ քեզմէ, ոչ ալ առանց նեցուկի պիտի ձգեմ քեզ [անշուշտ ոչ]”»:

Եբրայեցիներուն 13.5¹⁰

«Գիտցի՛ր, որ Աստուծոյ համար անկարելի բան չկայ»:

Ղուկասի 1.37

¹⁰ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն Տի Ամփոխֆայտ Պայպըլ, Քլասիք Էպիշոփն (AMPC) տարբերակէն

«Քու հոգի ձգէ՛ Տէրոջ վրայ, եւ ան քեզի նեցուկ պիտի ըլլայ [...]»:

Սաղմոսներու 55.22

«Երբ վախնամ՝ քեզի պիտի վստահիմ»:

Սաղմոսներու 56.3

ԱՍՏՈՒԱԾ ՔՈՒ ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆԴ ԵՒ ՈՅԺԴ Է:

«Կոտրած սիրտ ունեցողները կը բուժէ, եւ անոնց խոցերը կը փաթթէ»:

Սաղմոսներու 147.3

«Ան զօրութիւն կու տայ թուլացածին եւ յոգնածին, եւ անոր որ ոյժ չունի՝ ոյժը կ'աւելցնէ [...] Անոնք, որոնք Տիրոջ կը սպասեն [կ'ակնկալեն, կը փնտրեն եւ կը յուսան Անոր] պիտի փոխուին եւ պիտի նորոգեն իրենց ոյժը եւ զօրութիւնը [...] Անոնք պիտի վազեն եւ չյոգնին, պիտի քալեն եւ չճարին կամ չյոգնին»:

Եսայիի 40.29,31¹¹

«Ինծի՛ եկէք դուք բոլորդ, որ կ'աշխատիք եւ յոգնած ու ծանրաբեռնուած էք, եւ ես ձեզի հանգիստ պիտի տամ [պիտի ամոքեմ,

11 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն Տի Ամիլիֆայտ Պայպլը, Քլասիք Էպիշոն (AMPC) տարբերակէն

թերթեցնեն եւ թարմացնեն ձեր հոգին]»:

Մատթէոսի 11.28¹²

*«Աստուած մեր ապաւէնն ու զօրութիւնն է,
տագնապներու մէջ շուր գտնուող օգնական մը»:*

Սաղմոսներու 46.1

12 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Անկիլիֆայտ Պայպըլ, Քլասիք
Էպիշոփն (AMPC)* տարբերակէն

Փրկութեան Աղօթք

Աստուած կը սիրէ քեզ եւ կ'ուզէ անձնական յարաբերութիւն ունենալ հետդ: Եթէ Յիսուս Քրիստոսը չէս ընդունած իբրեւ քու Փրկիչդ, կրնաս ասիկա ընել հիմա: Պարզապէս բաց սիրտդ Իրեն եւ աղօթէ՛ այս աղօթքը:

«Հայր, գիտեմ, որ մեղանշած եմ Քեզի դէմ: Կը խնդրեմ, որ ներես ինձի: Մաքրէ՛ զիս: Կը խոստանամ վստահիլ Յիսուսի, Քու Որդիիդ: Կը հաւատամ, որ Ան մեռաւ ինձի համար. մեղքս Իր վրան առաւ երբ մեռաւ խաչին վրայ: Կը հաւատամ, որ Ան մեռելներէն յարութիւն առաւ: Ես իմ կեանքս Յիսուսի կը յանձնեմ հիմա: Շնորհակալ եմ, Հայր, Քու ներումի եւ յաւիտենական կեանքի պարգեւիդ համար: Կը խնդրեմ, որ օգնես ինձի, որ Քեզի համար ապրիմ: Յիսուսի անունով: Ամէն»:

Մինչ դուն այս աղօթքը ըրիր ամբողջ սրտովդ, Աստուած ընդունեց քեզ, մաքրեց քեզ եւ ազատեց քեզ հոգեւոր մահուան կապանքէն: Ժամանակ առ՝ կարդալու եւ սերտելու համար Աստուծոյ Խօսքը եւ խնդրէ՛ Աստուծմէ, որ խօսի քեզի մինչ կը քալես Իրեն հետ՝ քու նոր կեանքի այս ճամբորդութեան ընթացքին:

Յովհաննէսի 3.16
Եփեսացիներուն 1.4
Ա.Յովհաննէսի 1.9
Ա.Յովհաննէսի 5.1

Ա.Կորնթացիներուն 15.3-4
Եփեսացիներուն 2.8-9
Ա.Յովհաննէսի 4.14-15
Ա.Յովհաննէսի 5.12-13

Խնդրէ՛ Աստուծմէ, որ օգնէ քեզի, որ գտնես Աստուածաշունչին հաւատացող աղուոր եկեղեցի մը, որպէսզի քաջալերեն քեզ, որ աճիս Քրիստոսի հետ յարաբերութեանդ մէջ: Ան միշտ քեզի հետ է: Ան պիտի առաջնորդէ քեզ օրը օրին եւ ցոյց տայ քեզի ինչպէս ապրիլ այն առատութեան կեանքը, որ ունի քեզի համար:

Եթէ պատրաստ ես սկսելու Յիսուսի հետ քու սեփական, անձնական ճամբորդութեանդ կամ կ'ուզես ճանչնալ զի՛նք անլի խորունկ ձեռով, այցելէ՛

tv.joycemeyer.org/Western Armenian

ՀԵՂԻՆԱԿԻՆ ՄԱՍԻՆ

Ճօյս Մայրըը Նիու Եորք Թայմզի մեծ վաճառք ունեցող գիրքերու հեղինակներուն ցանկին վրայ է ինչպէս նաեւ աշխարհի առաջատար Աստուածաշունչի ուսուցիչներէն մէկն է: *Ճօյս Մայրը Մինիսթրիզի* ճամբով, ան կ'ուսուցանէ գործնականօրէն եւ անկեղծօրէն՝ բաց կերպով բաժնեկցելով իր փորձառութիւնները եւ օգնելով միլիոնաւոր մարդոց, որ կիրարկեն աստուածաշնչական սկզբունքներ իրենց կացութիւններուն մէջ եւ վերջ ի վերջոյ գտնեն յոյս եւ վերականգնում Յիսուս Քրիստոսի միջոցաւ: Անոր *Միտքի Ռազմադաշտը* գիրքը տարիներ շարունակ ամէնէն շատ վաճառուող գիրքերու շարքին եղած է: Անիկա մարդոց կը սորվեցնէ ինչպէս շահիլ միտքին մէջ ընթացող պատերազմը եւ «մտածել անոր մասին, թէ ինչ կը մտածեն»: Ճօյս խորհրդածողութեան կազմակերպած է ամբողջ Միացեալ Նահանգներու տարածքին ինչպէս նաեւ ամբողջ աշխարհի շուրջը, եւ անոր *Վայելել Ամենօրեայ Կեանքը* յայտագիրը կը սփռուի հեռատեսիլի եւ ձայնասփիւռի վրայ ինչպէս նաեւ առցանց՝ հասնելով միլիոնաւոր մարդոց աւելի քան 100 լեզուներով: Ան նաեւ գրած է աւելի քան 130 գիրքեր, որոնք թարգմանուած են աւելի քան 155 լեզուներու:

ՃՕՅՍ ՄԱՅՐԸ ՄԻՆԻՍԹԻՉ

Բաժնեկցիլ Քրիստոսը, Սիրելի Մարդիկը

Ճոյս Մայրը Մինիսթրիզը կոչուած է Աւետարանը բաժնեկցելու, ազգերը աշակերտելու եւ Քրիստոսի սէրը տարածելու:

Լրատուամիջոցներու ճամբով, մենք կը սորվեցնենք մարդոց ինչպէս կիրարկել աստուածաշնչական ճշմարտութիւնները իրենց կեանքի բոլոր մարզերուն մէջ եւ կը քաջալերենք Աստուծոյ ժողովուրդը, որ ծառայեն իրենց շուրջը գտնուող աշխարհին: Մեր միսիոնարական թեւին՝ «Յոյսի Ձեռք»ին միջոցաւ մենք կը մատակարարենք համաշխարհային մարդասիրական օժանդակութիւն, կը կերակրենք անօթիները, կը հագցնենք աղքատներուն, կը ծառայենք տարեցներուն, այրիներուն եւ որբերուն, եւ կը հասնինք ամէն տարիքի մարդոց՝ կեանքի բոլոր մարզերուն մէջ:

Ճոյս Մայրը Մինիսթրիզը կառուցուած է հաւատքի, պարկեշտութեան եւ նուիրուած ծառայողներու վրայ, որոնք կը բաժնեկցին այդ կոչումը:

* * *

*Ճոյս Մայրը Մինիսթրիզը*ն յաւելեալ քաջալերանք ստանալու համար, կը խնդրենք, որ այցելէք՝

tv.joycemeyer.org/Western Armenian



Առանձին Չէս

Դժուար ժամանակէ կ'անցնիս: Եթէ վերջերս ապրեցար աննախատեսուած ողբերգութիւն մը, ունեցար առողջապահական հարց մը կամ դուն քեզի հարց կու տաս, թէ յաջորդ կերակուրդ ո՞ր կէտէ պիտի գայ, Աստուած չ'ուզեր, որ առանձինդ մղէս այդ ճակատամարտը: Լաւագոյն բանը, որ կրնանք ընել՝ մեր վստահութիւնը Աստուծոյ վրայ դնելն է՝ գիտնալով, որ Ան մեզի հետ է եւ մենք կրնանք միշտ *յուսալից* ըլլալ:

Այս գիրքին մէջ ճօյս կը սորվեցնէ.

- Դժուար ժամանակներուն ինչպէս ստանալ Աստուծոյ մխիթարութիւնը:
- Ինչո՞ւ տեսակէտի փոփոխութիւնը կրնայ ամբողջովին փոխել օրդ:
- Ինչպէս նոր էջ մը բանալ եւ անցեալը ետին ձգել:
- Աստուածաշնչական բանալիներ՝ ընկճուածութեան եւ յուսալքութեան դէմ պայքարելու համար

Ինչ բանէ ալ, որ անցած ես, այս գիրքը պիտի օգնէ քեզի, որ բարձր ակնկալութիւն ունենաս եւ երբեք չհրաժարիս Աստուծմէ: Վերջապէս Աստուած «յոյսի Աստուած»ն է (տես Զոմմայեցիներուն 15.13), եւ Ան կրնայ քու դժուար կացութիւնդ շրջել եւ անկէ լաւ բան մը դուրս բերել: